

#382

Ս. ԵՐԵՎԱՆ

Կ Ո Ո Պ Ե Ր Ա Ց Ի Ա Ն
Յ Ե Վ Բ Ա Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն
Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ի Կ Ն Ն Ց Ա Ղ Ը

Հ Յ Ա Կ Ո Ո Պ



Պ Ե Տ Հ Ր Ե Տ

1 9 3 1


Յ Ե Ր Ե Վ Ա Ն

354 14 SEP 2017

Ա. ԵԳԵԼՄԱՆ

Կ Ո Ո Պ Ե Ր Ա Ց Ի Ա Ն
Յ Ե Վ
Բ Ա Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ի
Կ Ե Ն Ց Ա Ղ Ը

Թարգմ. ՋԱԳԱՆԵՑԻ



ԱՌԱՋԱԲԱՆ II ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Այս բրոշյուրի առաջին հրատարակության լույս տեսնելու որից անցել է գրեթե մի տարի՝ Այդ ժամանակամիջոցում մեզ շրջապատող պայմաններում մեծ փոփոխություններ են տեղի ունեցել: Արդյունաբերության բուռն զարգացումը, գյուղական տնտեսությունների կոլլեկտիվացման նույնքան բուռն զարգացումը, բանվորական լաչն մասսաների նյութական դրուժյան բարելավումը, իսկ դրա հետ միասին և կուլտուրական պահանջների բարձրացումը և վերջապես բանվորների աշխատանքի կազմակերպության նոր պայմանները — չլիք ժամյա աշխատանքի որ, անընդհատ շաբաթ և այլն. այս ամենը վճռական փոփոխություն մտցրեց կոոպերացիայի հայացքների ու վերաբերմունքի մեջ դեպի բանվոր դասակարգի կենցաղային սպասարկման հարցերը:

Կենցաղային աշխատանքը ներկայում ստացել է վճռական նշանակություն: Բանվորական ընտանիքի կենցաղը կոլլեկտիվացման չենթարկելու ու սոցիալիստական նոր կարգերի համեմատ վերակառուցելու խնդիրները զրավել են խորհրդային վողջ հասարակայնության ուշադրությունը, նրանք ստացել են որվա կարևորագույն պրոբլեմների նշանակություն: Այժմ ար-



1-283997

Հրատ. № 1667

Գլավլիտ № 6439 (բ)

Պատվեր № 2950

Տիրաժ 6000

Պետհրատի տպարան, Յերևան

դեն չեն խոսում այլևս կենցաղային առանձին միջոցառումները մասին: Այժմ խոսքը վերաբերում է արդեն միջոցառումների, մի ամբողջ սիստեմին, նոր, սոցիալիստական քաղաքների կառուցմանը, հին քաղաքների վերակառուցմանը, սննդային վիթխարի կոմբինատներ ստեղծելուն, կենցաղը լիովին հանրացնացնելուն: Կենցաղային սպասարկման տեմպի անբավարարությունը վերածվեց մի ամբողջ քաղաքական կամպանիայի, վոր սկսեց մեր մասուլը և առաջին հերթին «Կոմսոմոլսկայա Պրավդան»: Վերջինս, ինչպես հայտնի յե, հարց բարձրացրեց ստեղծելու հատուկ կուլտ-կենցաղային կոոպերացիա: Ճիշտ՝ թե սխալ եր լուծել խնդիրը «Կոմսոմոլսկայա Պրավդան» — այդ այլ հարց ե: Սակայն փաստըն ինքնին նշանակալից ե: Կենցաղի վերակառուցման հարցերն այնքան լուրջ են դարձել, վոր կիսամյուցներն այլևս չեն բավարարում, և այժմ լացն, ընդհանուր ու վճռական աշխատանքի ուղիներ են վստոնում այդ ասպարիզում:

Լուչս ընծայելով ներկա բրոշուրի չերկրորդ հրատարակությունը, հեղինակը կարևոր ե համարում նշել, վոր իր այս աշխատությունով նա բնավ չի մտածում լուծել բոլոր հասունացած հարցերը: Հեղինակի նպատակն ե կոոպերատիվային ակտիվի ուշագրությունը գրավել դեպի կենցաղային աշխատանքը, նրան ավելի ակտիվ գործունեություն կոչել այս ասպարիզում և թեկուզ ընդհանուր գծերով, ցույց տալ նրան աշխատանքի այն ճյուղերը, վորտեղ սպառողական կոոպերացիան կարող ե և պետք ե առանձնապես շատ բան անի: Այս բրոշուրի մեջ խոսքը վերաբերում է

բանվորա-քաղաքային սպառողական կոոպերացիային:

Այդ պատճառով ել հեղինակը չի շոշափում բնակարանին վերաբերյալ հարցերը, վորոնք անշուշտ մեծ դեր են խաղում բանվորական ընտանիքի կենցաղի կառուցվածքի, մեջ վորոնք սակայն վերաբերում են կոոպերատիվ այլ սիստեմի ու չեն շոշափում այն հարցերը վորոնք կապված են կոլտնտեսությունների կենցաղային սպասարկման հետ, թեև նրանք այժմ պակաս նշանակալից չեն, քան քաղաքի կենցաղային հարցերը: Հետևապես այս բրոշուրի վրա չպետք ե նայել իբրև մի աշխատանքի, վոր սպառում ե կենցաղային աշխատանքի բոլոր հարցերը: Այս միայն մի փոքրիկ մասնիկն ե այն բոլորի ինչ վոր պիտի ասվի և հավանորեն կաովի այդ կարևոր հարցի մասին:

Ամեն մի դիտողություն ու մատնանշում կընդունվի շնորհակալությամբ:

Հեղինակ

ԱՌԱՋԱԲԱՆ I ՇՐԱՏԱՐԱԿՈՒՅՅԱՆ

Կենցաղային աշխատանքը բանվորական կոոպերատիվներում վերջին ժամանակներս ընդունել է բավական լայն չափեր, սակայն ըստ յերևույթին աշխատանքն էլ ավելի չէ զարգանալու:

Այս բրոշյուրի նպատակն է ոգնել կոոպերատիվային ակտիվին պարզելու թե ինչու կոոպերատիվները պիտի զբաղվեն կենցաղային աշխատանքով և հատկապես ինչպիսի աշխատանք պիտի կատարեն:

Հեղինակը գիտակցում է, վոր ինքը թույլ է ավել շատ սխալներ ու բացեր: Չափազանց դժվար եր այս փոքրիկ բրոշյուրի մեջ ամփոփել բոլոր այն մեծ ու լուրջ հարցերը, վորոնք կապված են բանվորական ընտանիքի կենցաղի ու կոոպերացիայի աշխատանքի հետ, կենցաղի վերակառուցման ասպարիզում:

Այստեղից էլ առաջ է յեկել առանձին մոմենտների վնչ լրիվ ու սեղմ լուսաբանությունը և այլն:

Այնուամենայնիվ, յենթադրելով, վոր չնայած այս թերութուններին, ներկա բրոշյուրը վորոշ ոգուտ կրերի, հեղինակը նախորոք իր շնորհակալութունն է հայտնում բոլոր այն ընկերներին, վորոնք իրենց խորհուրդներով ու ցուցումներով կօգնեն՝ վերացնելու թույլ արված բոլոր թերություններն ու սխալները:

Հեղինակ

Ի՞ՆՉ ԿԱՐՈՒՔՆԵՐ ՈՒՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՐ, ՅԵՎ Ի՞ՆՉ ԶԵՎՈՎ ԵՆ ԲԱՎԱՐՔԱՐԿՈՒՄ ԱՅՎ ԿԱՐՈՒՔՆԵՐ

Բանվորական ընտանիքի յեկամուտի հիմնական աղբյուրն այն աշխատավարձն է վոր ստանում են այդ ընտանիքի անդամները: Հաշված է, վոր մի ընտանիքի, վորը բաղկացած է 4-6 (4,39) հոգուց, վորոնցից հասակավորները մոտ 3 հոգի (2,91), են, միջին թվով ընկնում է մոտավորապես մեկ ու կես (1,34) աշխատող ու աշխատավարձ ստացող մարդ:^{*}

Յեկամտի այդ աղբյուրը բանվորական ընտանիքի բոլոր յեկամուտների ընդհանուր հանրագումարի 84,6%⁰ է կազմում, կամ ուրիշ խոսքով—բանվորական ընտանիքի յեկամտի յուրաքանչյուր ուրբուց 84,6 կոպեկն աշխատավարձ է:

Իսկ յեթե այդ գումարին ավելացնենք և այն մուտքը, վոր այդ ընտանիքն ստանում է իբրև նպաստ սոցիալիստական ապահովարությունից, ապա դուրս կգա, վոր բանվորական ընտանիքի աշխատավարձն

^{*} Յե. Կորո «Բանվորական տնտեսության բալանսն ու բանվորական սպառման նորմաները 1926 թվին»: Աշխատանքի վիճակագրություն № 11-12, 1927 թ.

ու սոցիալիստական ապահովագրութեանը կազմում են նրա բոլոր յեկամուտների 92,30/0-ը:

Մնացած բոլոր յեկամուտները կրում են բավական պատահական բնույթ: Դրանք են՝ և՛ փոխադարձ ոգնութեան դրամաբեղից ստացվող փոխառութեանները, և՛ կուտակած խնայողութեանների վորոշ մասը, և կոտպերատիվում ստացվող ապահովիչ, և վերջապես սեփական տնտեսութեանից ստացվող արդյունքները:

Վերջինները յեկամուտների ընդհանուր գումարի մեջ շատ համեստ տեղ են բռնում: Սակայն պետք է նշել, վոր տեղ-տեղ յեկամտի այդ աղբյուրը մեծանում է: Որինակ, այն բանվորական ընտանիքը, վոր ապրում է գավառական քաղաքում, կամ մերձքաղաքային ավաններում, հնարավորութեան ունի յերբեմն իր կովը պահելու կամ ունենալու իր բանջարանոցը: Պարզ է, վոր այդպիսի ընտանիքի սեփական տնտեսութեան յեկամուտն զգալի չափով բարձրանում է և նրա ընդհանուր յեկամուտի գումարի մեջ ավելի աչքի ընկնող տեղ գրավում:

Բայց մայրաքաղաքի (կենտրոնական քաղաքների) բանվորին յեկամտի այդ աղբյուրը իսպառ բացակայում է: Հետևապես միջին թվով, — իսկ մենք տալիս ենք մեր ԽՍՀՄ. միջին ավայրները, — բանվորական ընտանիքի սեփական տնտեսութեան արդյունքը նրա ընդհանուր յեկամուտների մեջ աննշան տեղ է բռնում:

Բանվորն իր աշխատավարձի մեծագույն մասն ստանում է փողով և շատ չնչին մասը մթերքներով: Իր ստացած այդ փողով էլ բանվորի ընտանիքը պիտի հոգա իր ծախքերը:

Ի՞նչ ծախքերը լինում են զանազան տեսակի: Ծախքերի մի մասով հոգացվում են այնպիսի կարիքներ, ինչպիսիք են՝ բնակարանը, շուրքը, լուսավորութեանը: Մյուս մասը ծախսվում է հասարակական-քաղաքական կարիքների վրա՝ անդամավճարներ, ամեն տեսակի հատկացումներ և այլն, յերբորդը կուլտուրական կարիքները վրա (լրագիր, գիրք, կինո, թատրոն և այլն), լվացքի ու բաղնիքի, և վերջապես չորրորդ մասը ծախսվում է սննդի, հագուստի, տնտեսական զանազան իրեր գնելու համար և այլն:

Հետևապես բոլոր ծախքերը հիմնականում կարելի է բաժանել յերկու տեսակի՝ ծախքեր, վոր բանվորական ընտանիքն անում է զանազան գնումների վրա, կամ ինչպես ասում են ծախքեր, վոր կարելի է իրացնել շուկայում (սպասողական), և ծախքեր, վորոնք յենթակա չեն իրացման, այսինքն, վորոնք կապված չեն գնումների հետ (կատարվում են շուկայից դուրս):

Մեզ ամենից շատ հետաքրքրում են, իհարկե, այն ծախքերը, վոր կարելի է իրացնել, վորովհետև նրանցից մենք կտեսնենք, թե ի՞նչ բանի կարիք ունի բանվորական ընտանիքը, ի՞նչ է գնում նա, վորտեղից և ի՞նչպես են ոգտագործվում այդ գնումները հետագայում:

ԽՍՀՄ. 1927 թվի ամբողջ տարվա միջին տվյալների համաձայն մենք կարող ենք վորոշել, վոր սպասողական ծախքերի վրա, այսինքն այն ծախքերի, վոր կարելի է իրացնել շուկայում, — գնում է յեկամտի 79,20/0-ը, իսկ մնացած բոլոր կարիքների վրա միայն 20,80/0-ը, վորի մեջ են և զանազան տեսակի խնայո-

զուգահեռները միջերջներով, ինչպես տարվա վերջին մնացորդները, վառելահայտ և այլն և փոքրով կամ պետական փոխառութեան պարտաւաններով: Հետագա տարիներում սպառողական ծախքերի քանակը ընդհանուր ծախքերի համեմատութեամբ մի փոքր նվազում է, ի հաշիվ հասարակական-քաղաքական ու այլ կարիքների գծով կատարվող ծախքերի աճման:

1928 թվին սպառողական ծախքերը արդեն հասնում են միայն 78,1⁰/օ-ի 1929 թվին՝ 76,6⁰/օ-ի, իսկ 1930 թվին ինչպես նախատեսնված է պլանով, կհասնի միայն 74,3⁰/օ-ի: Միանգամայն աղեներև է, վոր աշխատավարձի զգալի մասը ծախսվում է ընտանիքի սպառողական կարիքները բավարարելու համար:

Այսպիսի պայմաններում մեզ չի կարող չհետաքրքրել թե ինչի՞ վրա լին ծախսվում այդ փողերը, և վա՞րձեր է իրացնում բանվորական ընտանիքը այդ փողերը:

Մեր տրամադրությունն տակ չեղած 1927 թվի վերջին վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, վոր բանվորական ընտանիքի կատարած ծախքերը ունին հետևյալ պատկերը.*)

*) «Բանվորների և ծառայողների բյուջեն», պրակ II, «բանվ. ընտանիքի բյուջեն 1922—1927 թ.» № 1929 ՆՍՀՄ ԿՎՎՎ, վիճ. հրատ.

ԾԱԽՔԻ ՀՈՒՎԱԾՆԵՐԸ

Տոկոսներով ամբողջ գումարի վերաբեր.

Բնակարան	6,9
Վառելահայտ և լուսավորութեան նյութեր	6,2
Մոտենդ	43,8
Վոգելից խմիչքներ	2,8
Ծխախոտ. պապիրոս և լուցկի	1,4
Հագուստ վտանաման և այլն	21,7
Լվացք	0,7
Տնտես. իրեր և սարքավորում	3,3
Առողջապահութուն	0,6
Բժշկութեան	0,2
Կուլտ-կրթական ծախքեր	2,2
Ընտանիքի անդամներին ոգնութուն	1,2
Սեփական տնտեսութեան ծախքեր	1,4
Զանազան այլ ծախքեր	5,8
Ընդամենը	100,0

Յեթե այստեղից մենք առանձնացնենք սպառողական ծախքերը, յսպա նրանք կկազմեն, ինչպես վերևումն էլ ասացինք,՝ 79,2⁰/օ, և սրա մեջ սննդի ծախքերը կկազմեն 44⁰/օ:

Հետևապես, բանվորական ընտանիքի ծախքերի զգալի մասը գնում է սննդի վրա, այնուհետև հագուստի՝ և վերջապես մնացածը՝ մյուս բաների վրա:

Այստեղ միջանկյալ պետք է նշել, վոր բանվորական ընտանիքի կողմից վոգելից խմիչքների վրա կատարվող ծախքերը դեռ վորոշ չափով գերազանցում

են նրա կուլտուրական կարիքների վրա գործադրված ծախսերից: Այս հանգամանքը կարող է, և պետք է հարկադրել մեզ շատ բաների մասին մտածելու:

Վորսեղ և Իսկ վորտեղից և ձեռք բերում բան-
գնումներ վորական ընտանիքն իրեն պետք չեկած
կատարում ապրանքները:

Բանվորական ընտանիքն ևն հե-
կան ընտանիքն տեղալ տվյալները.—

1927 թվին բանվորական ընտանիքներն սպառ-
ման գլխավոր նշույթերը ձեռք էլին բերում՝

Կոոպերացիայից	59,20%
Պետառևտրից	5,90%
Մասնավոր շուկայից	29,40%
Յեվ այլ ճանապարհներով	5,50%
Ընդամենը	100,00%

Այս տվյալներն անշուշտ արդեն հնացած են այժմ: Վերահսկիչ թվերից չեբևում է, վոր 1928-29 թվին բանվորական կոոպերացիան ընդգրկում էր արդեն բանվորների ու ծառայողների սպառողական բյուջեյի 70 տոկոսից էլ ավելին, իսկ 1929-30 թվին պետք է ընդգրկեր 80%-ից ավելին:

Սակայն, ինչպես կպարզվի այդ և հետագայում, առաջ բերված տվյալները մնում են հատկանշական:

Կոոպերա- Բանվորական ընտանիքի մատակա-
ցիան բան- կարարման հիմնական աղբյուրը կոոպե-
վորների մա րացիան է, և նրա դերը բանվորների
սակարար- մատակաշարման գործում անընդհատ մե-
ման գլխա- ծանում է ի հաշիվ պետառևտրի աստի-
վոր աղ- ճանական կրճատման ու մասնավորի՝
բյուրն է շուկայից վտարման:

Ընդհանուր առմամբ այս թվերը բավական մի-
թաբական են, սակայն չերբ մր փոքր ավելի մանրա-
մասնորեն քննենք, ապա պատկերը մի փոքր կփոխվի
դեպի վատը:

Սկսենք սննդից: Ինչպես հայտնի չէ, սննդա-
մթերքները լինում են յերկու տեսակի՝ գյուղատնտե-
սական (այլուր, կորկոտ, միս, բանջարեղեններ, կաթ-
նային մթերքներ և այլն) և արդյունաբերական-գա-
ղութային (թխած հաց, շաքար, թեյ, ձեթ, սելտեր
և այլն): Յեվ անա աչն ժամանակ, չերբ բանվորական
ընտանիքը 1927 թվին գյուղատնտեսական մթերքների
վրա ծախսում էր սննդի ամբողջ ծախսերի մոտ 90% և
իսկ արդյունաբերական-գաղութային ապրանքների
վրա միայն 10%-ը: Բանվորական կոոպերացիայի վա-
ճառած սննդամթերքների տեսակներից գյուղատնտե-
սական մթերքները կազմում են 60-ից մի փոքր ավելի
տոկոսը, իսկ արդյունաբերական-գաղութային ապ-
րանքների մոտ 40%-ը:

Բանվորական կոոպերացիայի ապրանքների ու
բանվորական սպառողական պահանջների այս անհա-
մապատասխանությունը անշուշտ ժամանակին ուներ
իր պատճառները:

Ամենից առաջ այստեղ բանն աչն էր, վոր ար-
դյունաբերական ապրանքներով գործ անելը հեշտ
է, վորովհետև այդ ապրանքները կոոպերացիային
պլանային կարգով մատակարարում է պետա-
կան արդյունաբերությունը, ի համաձայն հատուկ
պայմանագրերի, մինչդեռ գյուղատնտեսական ապ-
րանքների մատակարարումը կոոպերացիային չափա-
զանց անկազմակերպ էր, տեղական հնարավորու-

Թյունները թույլ ելին սգստագործվում և կոոպերացիան սեփական տնտեսություններ չունեն: Կոոպերացիան չունեն նաև գյուղատնտեսական մթերքներով աշխատողի համար անհրաժեշտ պահեստներ, սառցարաններ բանջարապահեստներ և այլն:

Սակայն բանվորական կոոպերացիայի ապրանքների տեսակների ու բանվորների բյուջեի այդ անանհամապատասխանությունն այժմ ել նկատելի չեզզալի չտփով: 1928—1929 թվին պատկերն այսպես եր՝

	Բյուջե	ապրանքի տեսակ.
Սպառողական ապրանքներ	61,9	54,5
Տնային սնունդ	59,8	51,4
Տնից դուրս	2,1	3,1
Վճչ սպառողական ապրանքներ	38,1	45,5
Վառելիք, լուսավորության շյուղեր	3,2	1,7
Վոգելից խմելուներ	3,6	3,3
Ծխախոտ պակետներ լուցիկ	2,0	2,0
Հագուստ-տուսլետ (արդուզարդ)	22,2	31,8
Տնտեսական իրեր	7,1	6,7

Ի՞նչ են ասում բերված տվյալները: Այն, վոր կոոպերացիան դեռ չի կարողացել իր աշխատանքներն այնպես վերականուցել, վոր համապատասխան լինի բանվորական ընտանիքի իրական կարիքներին ու պահանջներին:

Սակայն չնայելով մի շարք բացերին ու թերություններին, կոոպերացիայի դերը բանվորական ընտանիքներին սպառողական գլխավոր մթերքներ մատակարարելու գործում չափազանց մեծ է, իսկ այդ հանգամանքը մեծ պատասխանատվություն է գնում կոոպերացիայի վրա ու մի ամբողջ շարք մեծ ու բարդ խնդիրներ գնում նրա առաջ:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆՔԻ ԿԵՆՑԱՂԻ ԿՈՒԵԿՏԻՎԱՑԻՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

Այն փաստը, վոր բանվորական ընտանիքի կատարած ծախքերի մեծագույն մասն արդեն ընդգրկում է բանվորական կոոպերացիան՝ ինքնին շատ մեծ նվաճում է և գները բանվորական կոոպերացիայում անհամեմատ ավելի ցած են, քան մասնավոր շուկայում, և այդ հանգամանքը կարիք չունի այլևս վնչ մի առանձին ապացույցի:

Իսկ չերբ այդ այդպես է, ապա նշանակում է, վոր բանվորական կոոպերացիան տնտեսում է բանվորների աշխատավարձը (նրանց չեկամուտների ամենգլխավոր աղբյուրը), և նույն գումարով բանվորական ընտանիքը կոոպերացիայում իբեն պետք չեղած՝ ապրանքներից ավելի մեծ քանակությամբ կարող է ձեռք բերել, քան մասնավոր շուկայում:

Տվյալների համաձայն, կոոպերատիվի ու մասնավոր գների տարբերությունն առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. հավասար էր 13⁰/₀-ի, առ 1-ն հոկտեմբերի 1927 թ. այդ տարբերությունը բարձրացել է մինչև 21,7⁰/₀-ի և առ 1- հոկտեմբերի 1928 թ. տարբերությունն հասել էր արդեն 36,9⁰/₀-ի:

Յերկար ժամանակ կոոպերատիվի և մասնավոր գների տարբերությունը տեղի ունի գլխավորապես արդյունաբերական ապրանքների վերաբերմամբ: Գյու-

դատնետեսական ապրանքների գների տարբերությունն այնքան էլ մեծ չէր: Բայց վերջին տարիները կոոպերատիվ գների քաղաքականությունն ընթացավ չեղուկ գծով՝ մեծացավ արդյունաբերական ապրանքների գների ձեռքվածքները և միաժամանակ ավելի արագ կերպով աճեց տարբերությունը գյուղատնտեսական մթերքների գների ասպարիզում: 1928 թվի վերջերին կոոպերատիվ ու մասնավոր շուկայի գների տարբերությունը կազմում էր՝ արդյունաբերական ապրանքների վերաբերմամբ 30% իսկ գյուղատնտեսական մթերքների վերաբերմամբ մոտ 50%:

Ընդհանուր առմամբ բանվորական կոոպերացիան մասնավոր շուկայի միջին գների համեմատությամբ տնտեսել է հողուտ բանվոր-սպառողի 1926—27 թվին մոտավորապես 191 միլիոն ռուբլի և 1927—28 թվին 436 միլիոն ռուբլի: Վորքան աճում է բյուջեյի ընդգրկումը, այնքան ավելի ու ավելի աճում է և այդ տնտեսումը:

Բաց կարող է և պետք է կոոպերացիան սահմանափակվի միայն այդ նվաճումներով: Ամեն ինչ արած կլինի արդյոք կոոպերացիան, յեթե նույն իսկ 100%-ով ընդրկի բանվորական ընտանիքի սպառողական ծախքերը: Այս հարցերին վրձնականորեն բացասական պատասխան պետք է տալ:

Բանվորական ընտանիքի սպառողական կարիքների սպասարկումն այն ձևով, ինչ ձևով կատարում է

կոոպերացիան ներկայումս, լոկ մի մասն է այն խընդիրների, վորոնք զբված են նրա առաջ:

Իսկապես: Չե՞ վոր այն ապրանքները, ե՞նչի վրա յե գործավոր բան գեռ իրենց մեծագույն մասով այն նյութակաթիվում են, վորոնք անմիջապես գործածվում են բանվորական ընտանիքում: Դա կապես ուրինակ՝ ալյուրը գործածելու համար գեռ պետք է դարձնել թխած հաց: Միսը-ձափարը, բանջարեղենը և այլն նախ գեռ համապատասխան ձեղով վերածշակել ու պատրաստել, վորպեսզի պիտանի դառնան աննղի համար: Սապոնն իրեն-իրեն չի մաքրի սպիտակեղենը, գեռ պետք է լվանալ կոտրեղենը, պետք է ձեռք ու կարել, վոր դառնա այն հագուստը, վոր մենք հագնում ենք, և այլն և այլն: Այս բոլորի վրա, ինչպես մենք կտեսնենք հետագայում, բանվորական ընտանիքը գործադրում է շատ մեծ աշխատանք ու շատ մեծ ժամանակ: Յեվ նույն իսկ այդ ապրանքների մատակարարման չեղանակը, վոր այժմ կիրառում է կոոպերացիան շատ ժամեր են խլում ըսպառողից: Յեվ չեթե սրան ավելացնենք և այն ժամանակը, վոր գնում է յերեխաներին խնամելու, կարողարկատանի, սենյակներ մաքրելու վրա և այլն, հեշտունեթյամբ կարելի չե պատկերացնել թե ինչքան մեծ աշխատանք ու ժամանակ ենք վատնում մենք սպառողյուն կերպով և վորքան ծանր է անդրադառնում այս բանը բանվորական տնտեսների կուլտուրականությունը աճման վրա:

Այս խնդիրն այնքան լուրջ է, վոր վնչ մի կերպ չի կարելի անտեսել:

1-28392



Բավական ե մի փոքր խորը մտածել այդ մասին հասկանալու համար, թե վորքան հիվանդագին ե անդրադառնում այդ մեր կյանքի վողջ կառուցվածքի վրա. ինչպիսի հսկա արգելք ե նոր ու ավելի լավ կյանքի վերակառուցման ճանապարհին:

Ահա մի քանի, թեկուզ ե մի փոքր հնացած, փառացի տվյալներ, վորոնք ստացված են հատուկ հետազոտության հետևանքով և բավական պարզալույս են սփռում այդ հարցի վրա:

Աշխատող աղամարդու պմբողջ աշխատանքային ուրը հավասար ե 13 ժամ 2 րոպեյի, աշխատող կնոջը՝ վոր մեծ մասամբ հանդիսանում ե միաժամանակ և տանտիկին, 14 ժամ 45 ր. իսկ այն տանտիկնոջը՝ վոր վարձու աշխատանքով չի պարսպում՝ 13 ժամ 10 րոպե:

Իսկ այս բոլոր խմբակների աշխատանքային միջին ուրը կազմում ե 13 ժամ 5 րոպե: Հանգստի վրա, հաշվելով և կերակրվելու վրա գործադրվող ժամանակը, գնում ե 3 ժամ 17 րոպե, իսկ քնելու վրա՝ 7 ժամ 38 րոպե: Այսպիսով ամենից ավելի ծանրաբռնված են աշխատող կանայք: Սակայն, յեթե վերցնելու լինենք նույն իսկ այս բոլոր խմբերի միջին տվյալները ապա այդ դեպքում ևս հանգստի (քնելու հետ միասին) վրա գործադրվում ե ընդհանուր ժամանակից միայն 10 ժամ 55 րոպե, աշխատանքային բեռնավորումը հավասար ե 13 ժամ 5 րոպեյի, այսինքն՝ դեբազանցում ե հանգստից 2 ժամ 10 րոպեյով:

*) Ս. Գ. Սարումյեն արանվորական կենցաղը թվերով. Ս. հրատ. «չլանային տնտեսութուն» 1926.

Իայց այս դեռ այնքան ել բնորոշ չե: Վորպեսզի կարելի լինի ավելի պարզ պատկերացում ունենալ բանավորական ընտանիքի ժամանակի դասավորման մասին, պետք ե մանրամասնորեն քննել, թե ինչ ե այդ աշխատանքային բեռնավորումն, ինչպիսի աշխատանքի մասին ե այստեղ խոսքը:

Վորպեսզի պարզ լինի, նախ վերցնենք միջին տվյալները բոլոր խմբերի համար, իսկ հետո արդեն կանցնենք նրանից յուրաքանչյուրին առանձին:

Այսպիսով ամեն աշխատանքային միջին ուրը, վոր ինչպես ցույց տվինք վերևը, հավասար ե 13 ժամ 5 րոպեյի, ըստ աշխատանքների բնույթի դասավորվում ե հետևյալ կերպով.

1. ԱՐՏԵԿՐԿԱՆ ԱՅԻՆՏԱՆԵ

Վարձու աշխատանք (բնաժամյա և արտաժամյա և այլն-5 ժամ 48 րոպե *)

2 ՏՆՍԵՆ ԱՅԻՆՏԱՆԵ

ա) կերակուր պատրաստելու վրա	2 ժամ 54 րոպե
բ) բնակարանի խնամք	— ժ. 28 ր.
գ) հանգստի վրա	— ժ. 42 ր.
դ) » » յերեխաների խնամք	— ժ. 52 ր.
ե) » » իր անձի »	— ժ. 40

Ըրամենը տնային աշխատանքի վրա . . . 5 ժամ 16 ր.
Աշխատանքի շուկա և այլ գործերով գնալու . — ժ 54 րոպե

Ընդամենը պարտադիր աշխատանքի վրա—11 ժամ 58 ր.

*) Ս. Գ. Սարումյենի առողջադրած ժամերը րոպեների վերածելիս հարկ յեղավ դիմել թվերի վորոշ կտրացման:

Ազատ աշխատանք

- ա) Ինքնակրթութիւն 1—58 ը,
- բ) Հասարակական գործունեություն 1—09 ը,
- Ընդամենն ազատ աշխատանքի վրա 1 1 07 ը,

Ամբողջ որվա աշխատանքը 13 ժամ 0, 5 ը

Միայն այս աղյուսակն արդեն ինքնին տալիս է մեզ բավականաչափ նյութ յեզրակացութուններ հանելու համար:

Ամենից առաջ մենք համոզվում ենք, վոր տընային աշխատանքն այնքան էլ պակաս ժամանակ չէ լալում, քան արտադրական աշխատանքը: Այլ խոսքով այդ նշանակում է, ըստ ելութւան ամենամեծագոյնը, անհաճո ու հասարակականորեն անոգուտ աշխատանքի վրա մեզանում վատնվում է մի փոքր ավելի քիչ ժամանակ քան հիմնական վարձու աշխատանքի վրա:

Բայց այս դեռ քիչ է. ինքնազարգացման ու հասարակական աշխատանքի վրա 4,5 անգամ ավելի քիչ ժամանակ է գործադրվում, քան նույն այդ տընային աշխատանքի վրա:

Դժվար թի սրանից հետո հարկ լինի մանրամասն քննել թե ինչպես է դասավորվում հանգստի ժամանակը: Նշենք միայն, վոր 3 ժամ 17 բոպիյից ուտելու վրա գնում է 1,5 ժամ և զվարճութունների վրա 42 բոպի:

Յեթե ընդունենք նույնիսկ, վոր այդ զվարճութութունները միշտ խեղացի բնույթ են կրում, և դրանց վրա գործադրված ժամանակն ավելացնենք ինքնազարգացման ժամանակի վրա, այնուամենայնիվ գարձյալ շատ տխուր պատկեր կստանանք:

Բայց վորպեսզի բերված տվյալներն ավելի պարզ

լինեն, ոգտվենք նույն աշխատանքից*) ու տեսնենք թե ինչպես է դասավորված բանվորական ընտանիքի անդամների առանձին խմբերից չուրաքանչյուրի ժամանակը:

1. ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԱՅՍՆԱՆԵՔ

Ինչի վրա յե գնում ժամանակը աշխատող ախտող ամս-
աղամարդու կնոջ տիկնոջ
վարձու աշխատանք և այլն . . . 8 ժ 21 ը.—8 ժ. 16 ը—2 ժ. 06 ը

2. ՏՆԱՅԻՆ ԱՅՍՆԱՆԵՔ

- ա) կերակուր պատրաստելու վրա—ժ. 29 ը.—2 ժ 34 վի—5 ժ. 30 ը
- բ) » » բնակարանի խնամք . —ժ. 15 ը.—ժ. 24 ը.— ժ. 45 ը
- գ) » » հագուստի վրա . . . —ժ. 11 ը.—ժ. 42 ը.—1 ժ. 26
- դ) » » յերեխաների խնամք —ժ 0,9 ը.—ժ. 32 ը.—1 ժ. 56
- ե) » » իր անձի » . . . —ժ. 39 ը.—ժ. 36 ը.— ժ. 41 ը.

Ընդամենը տնային աշխատ. . . 1 ժ 43 ը.—4 ժ. 48 ը.—10 ժ. 18 ը.
3) Աշխատանքի շուկա և գնալ—ժ 10 ը.—1 ժ.— ը. — ժ 36 ը.

3. ԱԶՆՑ ԱՅՍՆԱՆԵՔ

- ա) ինքնակրթություն 1 ժ 36 ը.—ժ. 32 ը.—ժ 0, 9 ը,
- բ) հասարակական գործունեություն.—ժ 15 ը.—ժ 0,9 ը.—ժ—0, 1 ը,

Ընդամենն ազատ աշխատ. 1 ժ. 51 ը.—ժ 41 ը.—ժ—10 ը.
ամբողջորվա աշխատանքը . . 13 ժ. 05 ը. 14 ժ. 45 ը.—13 ժ 15 ը

4. ՀԱՆԳԻՍՑ

- ա) Ուտելու 1 ժ. 33 ը.—1 ժ. 16 ը.—1 ժ 34 ը
- բ) Զվարճութունների . . . —ժ. 42 ը.— ժ 24 ը.—ժ. 32 ը.
- գ) Այլ տեսակ հանգիստ
(Պարապություն և այլն)—ժ. 59 ը.— ժ, 45 ը.—1 ժ, 02 ը

Ընդամենը հանգստի —3 ժ. 14 ը. 2 ժ 0 25 ը.—3 ժ. 08 ը

*) Ս. Գ. Սարուսինն բանվորական կենցաղը թվերով:

Քուն —7 ժ. 41 բ. 6 ժ. 50 բ., —7 ժ. 42բ

Բոլորը միասին —24 ժ. —24 ժ. —24 ժ.

Ի՞նչ են ասում այս թվերը: Ասում են վոր չեթե աշխատող աղամարդը ապարդյուն աշխատանքի վրա գործադրում է 1 ժամ 43 բուպե, իսկ աշխատող կինը՝ 4 ժամ, ապա տանտիկինը վատնում է 10 ժամ 18 բուպե:

Խահանոց ու կուլթուրա Այսպիսով կանայք դեռ շատ հեռու չեն տնային աշխատանքներից ազատագրվելուց: Սակայն բերված թվերը համոզել են և մի այլ բանով. բավական է իրար մոտ դնել կուլտուրական պահանջները վրա գործադրվող ժամանակն ու տնային աշխատանքի ժամանակը՝ վորպեսզի ստացվի մեր կուլտուրական հետաքննարկության հարցի պարզ պատասխանը: Յեվ իսկապես, մինչև անգամ տղամարդիկ, վոր շատ քիչ են մասնակցում տնային աշխատանքներին, գրեթե նույնքան ժամանակ են վատնում դրա վրա, վորքան հասարակական կուլտուրական նպատակները վրա: Բանվորուհին այդ տնային աշխատանքի վրա վատնում է յոթն անգամ ավելի ժամանակ, քան կուլտուրական գործնեյության վրա, իսկ տանտիկինը՝ 60 անգամից ել ավելի:

Յեթե այս միանգամայն մուայլ պատկերի վրա ավելացնենք և այն, վոր կան և ընտանիքին ոգնող այլ անդամներ, վորոնք նույնպես մասնակցում են տնային այդ աշխատանքին, ապա հեշտությամբ կարելի չե պատկերացնել, թե վորքան շատ ժամանակ է վատնվում լիապես բանվորուհու համար բանվորական ընտանիքի բոլոր պահանջները:

Այդ գործի վրա վատնվում է անհամար եներգիա, վորն ավելի կանոնավոր ոգտագործման դեպքում կարող եր, ինչպես ասում են, սաբը տեղից շարժել: Մեր չեղիքը կարող եր անթիվ անգամ ավելի կուլտուրական ու հարուստ լինել, չեթե այս ուժերին արված լիներ պատշաճ ուղղություն:

Այս բոլորից հետո, հարկավոր է արդե՞ք մի անգամ ևս ապացուցել, վոր կոոպերացիան բանվորական ընտանիքին տարով եժան ու լավ ապրանք և հենց դրանով պաշտպանելով նրա չեկամտի գլխավոր աղբյուրը՝ աշխատավարձը, կատարած կլինի գործի միայն կեսը:

Կոոպերացիան իր աշխատանքով բանվորական ընտանիքի վոչ միայն կոպեկը պիտի անտեսի, այլ և նրա ժամն ու ժամանակը, առանց դրան մինք յերբեք չենք կարողանա կատարել այն կուլտուրական հեղափոխությունը վորի մասին ասել և վ. Ի. Լենինը:

Կենցաղի վերակառուցումը սոցիալիստական Մեզ համար այժմ միանգամայն պարզ պիտի լինի, վոր առաջընթաց շարժումը սոցիալիստական շինարարության ուղիով, արդյունաբերության զարգացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման ու ամբողջական և քաղաքի ու գյուղի փոխհարաբերության կանոնավորման հետ միասին — պետք է սերտ կերպով կապված լինի և բանվորական ընտանիքի կենցաղի հիմնական վերակառուցման հետ: Յեթե գյուղատնտեսությունը կրում է առավելապես արտադրական բնույթ՝ ապա բանվորի «տնտեսությունն» ունի գլխավորապես

սպասող բնույթ: Այդ պատճառով ել կոոպերացիայի
 դերը՝ ինչպես սոցիալիստական շինարարութեան մի
 կարևոր գործիքի՝ այն է, վարպետի դուրսդրանքը
 թեյան կոլեկտիվացման հիման վրա՝ սոցիալիզմի ուղին
 հարթի գյուղի համար և բանվորների կենցաղի կոլեկ-
 տիվացման հիման վրա պաշտաններ ստեղծի քաղաքի
 համար՝ արագ կերպով սոցիալիզմին անցնելու համար:
 Բանվորական կոոպերացիան այն ժամանակ
 միայն կատարած կլինի իր խնդիրները, չերբ կիպ մո-
 տենա այն հարցին և այն լեռանդով, ինչ լեռանդով
 մոտեցավ նա շուկան նվաճելու խնդրին:

III

**Ի՞նչ է ԱՐԵԷ ՅԵՎ Ի՞նչ ՊԵՏԶ Ե ԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
 ԿՈՕՊԵՐԱՑԻԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ ՎԵՐԿԱԹՈՒ-
 ՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Ինչպե՞ս կոո-
 պերացիան
 միանգամից
 չձեռնարկեց
 կենցաղա-
 յին առևտ-
 րային
 Ենթադրյալ գլխում մենք նշեցինք, վոր բան-
 վորական կոոպերացիան բանվորներին
 սպրանքներ մատակարարելով, կատա-
 րում է իր վրա դրված խնդիրներին մի մասը
 միայն: Միանգամայն ավելորդ է այժմ
 քննել, թե հատկապես վոր մասն է կատարել
 մեծ, թե՛ փոքր: Այդ բավական վիճելի չե և չարժե վե՛հ
 հարուցել աժմ ավյալ տեղում... Պարզ է մի բան-
 կոոպերացիան այդպես ել պետք է կատուցեր իր աշ-
 խատանքը, այն է՝ նախ տիրապետել շուկային, գառ-
 նալ աչնտեղ տեր ու տնորեն, վերցնել գների քաղա-

քականութունն իր ձեռքը, աշխատավարձն ապահովել
 ամեն տեսակ տատանումներից, վորոնք կախված են
 շուկայի քանակազույցից, և այս բոլորից հետո միայն
 ձեռնամուխ լինել յերկրորդ խնդրին: Կոոպերացիան
 բավարար միջոցներ չունի մեկ և մյուս աշխատանքը
 միաժամանակ կատարելու:

ժամանակ Դատելով բանվորական կոոպերացիայի
 և կենցաղա- մինչև այժմ ավամ արդյունքներով, վորոնց
 չին առևտ- մասին խոսեցինք մենք վերքը, պետք է աշ-
 րային ձեռ- ժըմ հայտարարել, վոր այդ յերկրորդ խըն-
 արկելու քըմ հայտարարել, վոր այդ յերկրորդ խըն-

դիրը կատարելու ժամանակը հասել է արդեն ու կոո-
 պերացիայի այդ աշխատանքին հենց այժմվանից պետք
 է կիպ մոտենալ:

Ի՞նչ միջև որս մի բան արե՞լ է այդ ուղղութեամբ
 կոոպերացիան: Կան արդոք այդ ասպարիզում շատ թե
 քիչ նվաճումներ:

Իսկ ի՞նչ է Այդ հարցին մենք կպատասխանենք.
 արված այո, արել ե: Կան և նվաճումներ: Կենցա-
 ղային աշխատանքի մի քանի ճյուղերում այդ նվաճում-
 ները շատ մեծ են (հաց թխելու), իսկ մի քանիսում՝
 համեմատյալ դեպս փոքր չեն (հասարակական սնունդ),
 մյուսներում՝ նրանք կրում են շատ թե քիչ առաջին
 հաստատուն քայլերի բնույթ (յերեխաների հոգատա-
 րութուն) և, վերջապես մնացածների՝ ասպարիզում
 մենք դեռ աշխատում ենք անել մեր առաջին քայլերը
 միայն (լվացքատներ, կար ու կարելատանի արհեստա-
 նոցներ և այլն):

Ներկա գլխում մենք կամենում ենք թուուցիկ կեր-
 պով տեսնել, թե ի՞նչ է արված, վորպեսզի ոգավելով

նվաճումների ու սխալների դասերից, հնարավորու-
թյուն ունենանք, նշելու թե՛ ի՞նչ պետք է անել առա-
ջիկայում:

Հաց թխելու ասպարիզում:

Սկսենք հաց թխելուց—կենցաղային աշխատանքի
այն ճյուղից, վորի մեջ կոոպերացիան ամենամեծ նվա-
ճումներն ունի ներկայում:

Ամենից առաջ պետք է նշել այն նշանակալից հան-
գամանքը, վոր նայած՝ այդ տեսակ աշխատանքով կոո-
պերացիան պարապում է արդեն շատ վաղուց, սակայն
ամենամեծ նվաճումները ձեռք են բերված վերջին տա-
րիները միայն: Բանվորական կոոպերացիան վնչ միայն
գրավել է հիմնական տեղը թխած հացի շուկայում,
իր ձեռքն առնելով թխած հացի սպառումն 65 0/0-ը,
այլ և վորոշ շրջաններում նա դառնում է շուկայի գրեթե
միակ տերը: Այսպես, որինակ Մոսկվայում ու Լենին-
գրադում կոոպերացիան շուկա յե հանում քաղաքում
թխվող հացի 90 0/0-ը, Ուդեսայում՝ 85 0/0-ը, Մինսկում՝
70 0/0-ը, Դոնի Ռոստովում՝ 75 0/0-ը, Ստալինգրադում՝
65 0/0-ը և այլն:*)

Կենտմիության տվյալները**) համաձայն 1928—29 թ.
Խ. Ս. Հ. Միության սպառողական բոլոր կոոպերատիվ-
ներում դործում էլին 2779 հաց թխող ձեռնարկու-
թյուններ, վորոնցից շատ թե քիչ խոշորները կազմում
էին 353 հատ: Այդ ձեռնարկությունների արտադրած

*) Սպառողական կոոպերացիայի հնգամյա պլանը Խ. Ս. Հ. Մ.-ում:
Մ., հրատ. Կենտ. Միութ. 1929 թ.

**) Սպառողական կոոպերացիայի վրա հսկիչ թվերը Խ. Ս. Հ. Մ.-
ում 1929—30 թվին:

հացի արժեքը հասնում էր 388,4 միլիոն ռուբլու և խո-
շոր ձեռնարկություններին այդ գումարից ընկնում էր
307 միլիոն: Բանվոր-ծառայողների թիվն այդ ձեռ-
նարկություններում հասնում էր 46181-ի:

Սակայն այստեղ ցուցադրված պատկերը լրիվ չի
լինի, յեթե չընդափենք մի այլ հարց ևս, վոր կապված
է կոոպերացիայի արտադրած հացի հետ:

Կոոպերատիվ հացը այն ժամանակ միայն կարող է
դուրս մղել անալին հացի տաշտը, յեբբ իր արտադ-
րած հացի վորակով ու արժեքով ապացուցի, վոր անա-
լին հացը ձեռնտու է ընավ:

Հավաքից Յերկար ժամանակ կոոպերացիան հաց
միջնակակա թխելու համար ուղտվում էր հեն, տնաչ-
գործարան նագործական փոերից, վորտեղ արտադ-
րական աշխատանքը կատարվում էր ձեռքով, ծանր ու
հակաառողջապահական պայմաններում:

Այդ պայմաններում, հարկավ, կոոպերացիան չեր
կարող մրցել մասնավոր հացթուխների դեմ վնչ իր
հացի վորակով, և վնչ էլ արժեքով: Չե՞վոր շատ չի ան-
ցել այն որերից, յեբբ թխված ր տարականները, ճան-
ճերն ու «ձրի այլ հավելվածները» գրեթե առորգա յե-
րևույթներ էլին:

Ներկայում կոոպերացիան կանգնած է իր հաց թխե-
լու գործը «մեքենայացնելու ուղու վրա: Նախկին հա-
վաքների, կեղտոտ նկուղիների, նահապետական աղտոտ
տաշտերի փոխարեն բանվորական կոոպերացիան ներ-
կայում կառուցում է հսկա հացագործարաններ, վոր-
տեղ հաց թխելու ամբողջ աշխատանքն՝ սկսած ալյուրի
պարկը տալուց մինչև պատրաստի հացն իր բաժան-
մունքները տանելը, կատարվում է մեքենայական մի-

Չոցներով, չափազանց հետաքրքիր մեքանաների ոգ-
նությամբ: Ամեն ինչ այստեղ մաքուր է, խտանկ, խե-
լացի ու լավ (տես նկարները): Գործարանները տալիս
են վորակով լավ ու արժեքով եփան հաց, իսկ այդ
այն բոլորն է, ինչ մեզ հարկավոր է:

Հացագործարանների ու տնայնագործական փոերի
արտադրության արժեքի տարբերությունն ապշեցու-
ցիչ է: «Моспо»-ի ավալների համաձայն, հաճարի հացի
արտադրական ծախքերը մեքենայական թխվածքի շը-
նորհիվ պակասել են 40—50 0/0-ով, իսկ ցորնի հացինը՝
30—38 0/0-ով: Հաճարի թթու հացն արժե՝ Մոսկվայի
№ 2 գործարանում 7,8 կոպեկ կիրոն, № 18 գործարա-
նում (կիսամեքենայացրած) 8,33 կոպեկ:

Մաղած հացի կիրոյի ինքնարժեքը № 2 գործա-
րանում 13,84 կոպեկ է, իսկ № 17 ում (տնայնագոր-
ծական) — 16,85 կոպեկ: Տնայնագործական փոերում մի
բանվորը կարող է թխել մաքսիմում 350 կիրոգրամ հա-
ճարի հաց, իսկ հացագործարանում մոտ 900 կիրոգրամ:

1926—27 տնտեսական տարվանից մինչև 1928—
29 թ. բանվորական կոոպերացիան կառուցել է 49 հա-
ցագործարան, որական 1561 տոնն ընդհանուր արտա-
դրողականությամբ յերկու հերթի աշխատանքով (16
ժամ):

Բացի այս, վերջանալու վրա ելին 26 հացագոր-
ծարանների կառուցուվը (1930 թ.) որական 667 տոն
արտադրողականությամբ և նախագծված եր 1929—30 թ.
կառուցել 62 հացագործարան 14666 տոնն արտադրո-
ղականությամբ:

Հնգամյա պլանի համաձայն նախատեսնվում է
սպառողական կոոպերացիայի քաղաքային սեկտորի

գծով կառուցել ընդամենը 177 հացագործարան և 51
մեքենայացրած փուռ: Այս շինարարության արժեքը
80 միլիոնից ավելի է:

Սակաչն հացագործարանների կառուցման հետ
միաժամանակ զգալի փոփոխություններ են մտցվում
և տնայնագործական փոերի մեջ: Մի տեղ կատարելա-
գործված վառարան են դնում, մի տեղ զտիչ կամ մա-
ղող մեքենա, և տեսնում ես, վոր այստեղ ել գործը
բարելավվում է:

Աշխատանքի այսպիսի թափի հետևանքով տնա-
յին տաշան ավելի ու ավելի է վտարվում, և հետուչի
այն որը, յերբ նա կանցնի հիշողությունների շարքը՝
Հաց քլես- Բնավ ճիշտ չեր լինի, յերբ թված նվա-
լու քերտք- ճուճները հետ միաժամանակ չնշեյինք և
յունները այն թերությունները, վոր նկատվում են
հաց թխելու ասպարիզում: Իսկ թերություններ ինչ-
պես ամեն մի մեծ գործում, կան և այստեղ:

Անհաջող է մեզանում, կոոպերացիաներում, հացի
մատակարարում փոերից ու գործարաններից հացի խա-
նութներին ու հաց բաժանող կետերին: Յերբեմն հացը
վաղ են բերում, յերբեմն ուշ, հաշվի չի առնվում, թե
լեբբ բնակչությունն ավելի մեծ պահանջ ունի հացի
և այլն: Հետևանքը՝ դժգոհություններ, կշտամբանք ու
հերթեր:

Շատ տեղերում լավ չի հացի վորակը: Վառարան-
ների չափազանց մեծ բեռնավորումը մի քանի փոե-
րում, շտապ աշխատանքը, անբավարար հսկողությունն
հումքի վրա, այս բոլորն ստեղծում է այնպիսի պայ-
մաններ, վորոնց մեջ հացը չի կարող միշտ լավորակ
լինել: Սպառողը դժգոհում է, և նա իրավացի է:

Մոտ մի տարի առաջ Տվերում, տեղական «Տվեր-
սկալա Պրավդա» թերթը մի հետաքրքիր փորձ կատա-
րեց՝ «հացի թխվածքի միտրոյա քննության» նման մի
բան: Արտահայտվեցին սպառողները, արտահայտվեց
Կ. Բ. Կ (Ա. Բ. Կ.) խոսեցին իրենց աշխատանքի մա-
սին և արտադրող-վարպետները: Այս «քննության»
նորճիվ լերեան լեկան շատ հետաքրքիր փաստեր: Վար-
պետներից մեկն, որինակ, պատմում է, վոր չեթե նոր-
մալ պայմաններում վառարանը վառելուց հետո գոնե
մի ժամ պիտի հանգստանա, ապա իր փռում մեծ բեռ-
նավորման շնորճիվ վառարանը բնավ չի հանգստանում:
Դրա հետևանքով, չեբբ խմորը գցում են չհանգստա-
ցած, չնստած տաքության մեջ, նրա յերեսն իսկուցն
այրվում է, իսկ մեջը մոռում է հում: Գաղտնիքը
շատ հասարակ կերպով է բացատրվում: Այդպիսի փոս-
տեր շատ կան: Տվերի Կ. Բ. Կ-ը իմացավ այդ բոլորը,
և անշուշտ դրանցից շատերը կարելի կլինի ուղղել:

Ահա այսպիսի հասարակական ուշադիր վերաբեր-
մունքը հաց թխելու գործում կարող էր բուժել շատ
անտխորժ հիվանդութուններ այս ասպարիզում:

Վերջին տեղը չի բռնում և լավ վարժված աշխա-
տավորներ ունենալու հարցը: Այդպիսիներ շատ քիչ
ունենք մենք, մանավանդ չեբբ նկատի առնենք գործի
անընդհատ մեքենայացումը: Վարպետից, ինչպես հաչ-
տնի չե, շատ բան է կախված: Լավ սովորած աշխա-
տավորների կադր ստեղծելն անկասկած կառողջացնի
բանվորական կոոպերացիայի այս կարևոր գործը:

Այս տեսակետից արդեն վորոշ միջոցներ ձեռնար-
կվում են: Տեղ-տեղ կադմակերպվում են հացթուխների
գործաշղթայրոցներ: Մտցվում են հատուկ առարկաներ՝

հասե տեխնիկումներում, իսկ Մոսկվայի Ղենինի անվան
պոլիտեխնիկումում բացված է հացագործական հատուկ
բաժանմունք և այլն:

ՀԱՍՏՐՈՎԵԿԱՆ ՄԵՌՆԵՐ

Անցնելով հասարակական սննդի հարցերին, պե-
տք է նշել, վոր այս ասպարիզում գործն այնպես հա-
ջող չի դրված, ինչպես հաց թխելու ասպարիզում:
Չնայելով ճաշարանների թվի աճմանը, նայելով կոոպե-
րացիայի ձեռք առած մի շարք միջոցներին, վորոնց
նպատակն է կենցաղային աշխատանքի այս կարևոր
ձուղը բարելավել,—այնուամենայնիվ գործն առաջ է
գնում դանդաղ և վնչ միշտ այնպես բարեհաջող, ինչ-
պես պետք էր:

Բանվորական կոոպերացիան, ժողովնդի ավյալ-
ների համաձայն 2928 թվի վերջերին ունեւր մոտավո-
րապես 1000 ճաշարան, վորոնք կարող էլին որական
մինչև 720 հազար ճաշ տալ:

Այդ ըստ լերևուցթին բավական մեծ թիվ է, վո-
րով կարելի չեր նուչնիսկ պարծենալ: Սակայն, իրա-
կանում, չեբբ համեմատում ենք իրար հետ այն, ինչ
մենք ունեւլինք և այն, ինչ մեզ պետք է,—ստացվում
է միանգամայն այլ պատկեր:

Ինչպես արդեն ցուցց տվինք վերևում, սննդի ծախ-
քերը բանվորական ընտանիքի բյուջելի 45—50% են
կազմում: Պետականի ավյալների համաձայն այդ հասնում
է տարեկան 3,5 միլիարդ ուուրլու: Այդ ծախքերը չա-
փազանց փոշիացած են և ցրված ահազին քանակու-

թիւ 6 միլիոն) մասեր, անհատական տնային տնտեսութեաններէ մեջ: Մյուս կողմից, բանտորական ընտանիքի ժամանակի բյուջեյում, ինչպէս մենք տեսնուցանելի պատրաստուին անազին ժամանակ ե խլում, վոր կազմում ե արտադրական աշխատանքի վրա գործ գրված ժամանակի համարյա 50 0/0-ն ու մի քանի անգամ դերագանցում ե այն ժամանակից, վոր գործարարվում ե հասարակական—քաղաքական ու կուլտուրական կարիքներէ համար:

Բացի այդ, սնունդը տանը պատրաստելը պատճառ ե դառնում մթերքների ու վառելիքի վրա գործադրվող ավելորդ ծախքերի, վորոնք սննդամթերքների շուկայի աշխարհային լուրջագրութեան պայմաններում անազին նշանակութիւն ունի: Մի քանի հաշվառումների համաձայն սննդի միայն վերակառուցումը, կերակրի մի տեսակի փոխարկումը մյուսով, կարող ե տալ տարեկան 32 հազար տոնն մոխր կամ 200 հազար գլուխ անասնի խնայողութիւն:

Մինչդեռ այժմյան արտաանային սննդից հաշված ինչպէս սպառողական սիստեմի ձեռնարկութիւնները, ոգտվում են ընդամենը խոշոր կենտրոնների քաղաքային բնակչութեան 10 0/0-ը միայն: Առանձին քաղաքներում այդ տոկոսն ավելի ցածր ե ե հասնում ե 4—6 0/0-ի: Այդ արտատնային սննդից ոգտվում ե արտադրական բանվորների 20 0/0-ը միայն ե այդ ոգտվողներից 60 0/0-ն ամուրի, միայնակ մարդիկն են: Այսպիսով ընտանիքավոր բանվորը դեռ շատ քիչ ե դիմում հասարակական սննդի ոգնութեանը:

Ի՞նչն ե պատճառը:

Թվում եր, թի ել ի՞նչը կարող ե ավելի ձեռնառու

լինել, քան հասարակական սնունդը: Ել ի՞նչը կարող եր ավելի լավ ու հաճելի լինել, քան պրիմուսից ու պլիտայից հրաժարվելը:

Ինչո՞ւ այդպէս դանդաղ ե զարգանում հասարակական սննդի գործը:

Հասարակական սննդի քաղաքացիական պատճառն
Այս հարցերին պատասխանելու համար նախ պետք ե ասել, վոր այստեղ չերկու տեսակի պատճառներ կան՝ մեկը կախում ունի կոոպերացիայից մյուսը՝ կոոպերացիայից անկախ ե:

Ամենից առաջ դեռ շատ փոքր ե ճաշարանների ցանցը, 1000 միավորն անկարող ե բավարարել ներկայի հասունացած պահանջները: Իսկ ցանցը լայնացնելու համար հարկավոր են մեծ միջոցներ, վորը բավարար չափով դեռ չունի իր տրամադրութեան տակ մեր կոոպերացիան:

Ժող Մու.-ի հնգամյա պլանի սկզբնական նախագծի համաձայն նախատեսվում եր հասարակական սննդի ցանցն ընդլայնել ե հասցնել մինչև 1400 միավորի, վորոնք հնարարու թիւն ունենային բաց թողնելու որական 2 միլիոն 2 հարյուր հազարից ավելի ճաշ: Այդ պայմաններում հնգամյակի վերջին հասարակական սնունդը կընդգրկեր քաղաքային բնակչութեան մինչև 20 0/0-ը, արտադրական բանվորներին— արհմիութեան անդամների 35 0/0-ը, ե բանվորական այնպիսի խմբեր, ինչպէս մետաղագործները, տպագրիչներն ու հանքագործները— կընդգրկվեն 42—47 0/0-ով, մանածագործները, կար անողները՝ 32—36 0/0-ով, իսկ մյուս խմբերն ընդամենը 25—29 0/0-ով միայն:

Այդ պլանն այժմ վերաքննվում է զգալի չափով
ընդլայնելու նպատակով: Դրամական արտահայտու-
թյան պլանը սկզբում նախատեսվում էր 135 միլիոն
ոսերի, հետո այդ գումարը բարձրացվեց մինչև 225
միլիոնի, իսկ այժմ պլանը վերափոխելիս նախատես-
վում է 500 միլ. ոսերի:

Այս պլանի իրագործման դեպքում գործը գլուխ
չի գա իհարկե առանց պետութայն, արհմիությունների
և այլ կազմակերպությունների ոգնության, սակայն,
չե՞ վոր այդ ել դեռ քիչ է:

Պետք է բնակչությունն ինքը նպատար հասարա-
կական սննդի զարգացմանը, այդ գործի մեջ մտցնելով
իր միջոցները, կազմակերպելով ինքնաշխատ կոլեկտիվ-
եր և այլն, վորոնց մասին խոսք կլինի ներքևը:

Սպառողների սպասարկման վորակը վորոշ չափով
կախված է և շենրի հարմարությունից: Ճաշարանները
պետք է ունենան սալքավորված շենքեր. վորտեղ լի-
նի և լավ ու հարմարավոր խոհանոցներ, և՛ շտեմարան-
ներ ու մատաններ, և՛ հուժքը նախնական մշակման
լեռնթարկելու բաժանմունք, և՛ լավ լուսավորված, ճա-
շելու մաքուր դահլիճներ և այլն:

Իսկ մենք շատ ունենք այդպիսի շենքերը:

Մեր ճաշարանները մեծ մասամբ տեղավորված
են այդ նպատակի համար շատ քիչ հարմար շենքերում:

Սննդի պատրաստման հետամնաց տեխնիկան, բա-
վարար թվով վորակավորյալ աշխատավորներ ու ար-
տադրութայն գործիքներ չունենալը և այլն, նույնպես
ազդում են սպասարկման վորակի վրա:

Ամբողջ Միության մեջ մենք ներկայումս դեռ
լերիւ աշխատող խոհանոց-գործարան ունենք միայն

(չհաշված մեծ թվով նոր կառուցվողները) Իվանովո-
վադնեսենսկում, Նիժնի-Նովգորոդում, Դնեպրոստրո-
յում և Մոսկվայում: Իսկ մնացած բոլոր ճաշարանները
մեծ մասամբ աշխատում չեն տնայնագործական, հին
յեղանակով:

Ճիշտ է, մտցվում են զանազան տեսակի բարե-
լավումներ, մասնակի մեքենայացման ձևով (կարտո-
ֆիլ մաքրող, բանջարեղեն ու հաց կտրատող, միս ծե-
ծող, աման լվացող և այլն մեքենաների միջոցով), տա-
կայն այս ամենը դեռ նոր է սկսում զարգանալ ու
ծավալվել:

Իսկ թե ի՞նչ է նստում աշխատանքի տնայնագոր-
ծական լեզանակը, կարելի չէ դատել թեկուզ հենց
միայն նրանից, վոր սովորական տիպի ճաշարաննե-
րում միայն ապարատի ծախքը կազմում է ամբողջ
ըրջանառության 37,5 տոկոսը, իսկ գործարան-խոհա-
նոցներում միայն 25,1 տոկոսը: Ահա հենց այստեղ է
և ճաշերի թահուցության գաղտնիքը: Այդ պատճառով
եւ պետք է ճիշտ համարել խոշոր, մեքենայացրած ար-
տադրություն ստեղծելու տեսակետը հասարակական
սննդի ասպարիզում: Սակայն շատ պատճառներ ել կան
վորոնք կախված են հենց իրենից-կոոպերացիայից:

Մեր հիվան. Կոոպերատիվ ճաշարանների գրեթե
դուրյուն- սովորական հիվանդությունն այն է, վոր
ներ հաճախորդն ստիպված է լինում ահագին
ժամանակ կորցնել ճաշելու վրա: Հաճախ

մեր ճաշարաններում կարելի չէ տեսնել այնպիսի պատ-
կեր, չերբ հաճախորդը վճարելով փողը և ստանալով
տալոնները, նստում է 10-15 րոպե, դեռ սկզբում հան-
դիստ, հետո, չերբ բանը հասնում է կես ժամվա, ու

նրան դեռ չեն սպասարկում, սկսում է ջղայնանալ, և վերջապես սպասելուց բանը փոխվում է վեճի, կշտամբանքի ու գանգատի: Այս հիվանդության մասին հատկապես ամենից շատ խոսում ու գրում է սպառողը՝ Այս աննորմալ դրութիւնը մեծ մասամբ առաջ է գալիս գործի վատ կազմակերպումից՝ սպասները ու անօթների պակասութիւնից, դանդաղ լվացումից, աշխատանքի անհաջող բաժանումից և այլն:

Սրա հետ միասին, ճիշտ և, թեև իբրև բացառութիւն, բայց ունենք և այնպիսի ճաշարաններ, վորոնք շատ լավ են կազմակերպել իրենց աշխատանքը:

Լենինգրադում, որինակ, ՊետրոշըՎանի բանկոտպի № 3 ճաշարանում 20-25 բոպելում կարելի չէ լավ և եժան ճաշել: Այդպիսի ճաշարանները մեծ ժողովըրդականութիւն են վայելում բանվորների շրջանում:

Հետո մաքրութեան հարցը: Կոոպերատիվ ճաշարաններում մաքրութիւնն այնքան էլ հարդի չէ: Իսկ կեղտոտ, անմաքուր ճաշարանը խրտնեցնում է հաճախորդին: Վարչութիւնն արգարանալով, հաճախ պատճառ է բռնում իրենց՝ հաճախորդների անփութութիւնը, տեղի նեղութիւնը և այլն: Սրան պետք է պատասխանել, վոր մաքրութիւնն առաջ կբերի մաքրութիւն, իսկ նեղվածքութիւնը, թեև, իրոք, վատ է անդրադառնում մաքրութեան վրա, սակայն նրա դեմ կարելի չի և պետք է կռվել: Պետք է լայն կերպով գործադրել տաք ճաշերի տեղափոխումը խոշոր ճաշարաններից ձեռնարկութիւնները, պետք է ընդարձակել, տները ճաշ բաց թողնելու գործը, պետք է վերջապես յերկարացնել ճաշը բաց թողնելու ժամանակամիջոցը:

համապատասխան կերպով կարգավորելով աշխատավորների գալն ու գնալը:

Ուկրաինայում տեղ-տեղ սկսում է տարածվել տները ճաշ բաց թողնելու մի շատ հետաքրքիր միջոց: Շատ չնչին վճարով, գրավահանի ձեռով, ճաշ ստացող ընտանիքը, կամ միակ մարդը ճաշարանից ստանում է գեղեցիկ ու հալմար շինված մի տեսակ ստանտարդ դամբուղ, վորի մեջ նախորոք հարմարեցրած տեղերում դրվում է կարևոր թվով սպասներ ու անօթներ կերակրի համար: Ընտանիքի անդամներից մեկն ու մեկը, կամ մեկակյացը գալիս է ճաշարան, հանձնում դամբուղը չեբեկվա ամաններով, (կարելի չի չլվացած, միայն ավելցուկը պետք է թափել անպայման) և ճաշ բաժանողը նրանց տեղը դնում է նոր լվացած ամաններ ու մաքուր սպաս, կերակրով լիքը:

Տները ճաշ բաց թողնելու որգինալ ու հարմարավոր յեղանակը չի կարող լայն գործադրութիւն չգտնել, իսկ այդ բանն արդեն վորոշ չափով կթեթևացնի ճաշարաններում տեղի ունեցող իրարանցումն ու խառնաշփոթութիւնը: Կարևոր է նշել նաև, վոր տուն տրվող ճաշը վորոշ չափով եժան է ճաշարանում ստացվող ճաշից:

Բայց ամենակարևորը կերակրի վորակն է համի ու սննդարարութեան տեսակետից: Կոոպերատիվ ճաշարանները հաճախ չեն կարողանում իրենց աշխատանքները հարմարեցնել սպառողի ճաշակին ու պահանջներին, կամ ընդհակառակը՝ չափից դուրս են չենթարկվում այդ ճաշակին՝ ինչս սպառողի առողջութեան, դեմ գնալով գիտութեան պահանջներին սննդաբութեան ասպարիզում:

Առաջին դեպքում ճաշարաններն ամեն որ չե-
 փում են միևնույն կերակուրը, մի անգամ ընդմիջտ
 իրենց համար մշակված սովորութեան համաձայն* թթու
 շշի ու կատիկտ և ուրիշ վոչինչ, և մոռանում են, վոր
 միակերպ սնունդը ցանձրալի յե, դժվարամարս ու-
 գանիզմի համար և այլն: Բացի այս, պետք է կարո-
 դանալ սպառողին տալ այն, ինչն իսկապես պետք է
 նրան: Շատ ունենք մենք արդյոք այնպիսի ճաշա-
 րաններ, վորոնք տային զիչետային*) կերակուրներ:
 Շատ ճաշարաններում արդյոք հաշվի յեն անվում այն
 հանգամանքը, վոր հնարավոր լինի այնտեղ կերակրել
 և մանուկներին: Իսկ յեթե մտնում է մի սեզոնային-
 կառուցող, վոր սովոր է միանգամայն տարբեր կերա-
 կրի, քան խորհրդային ծառայողը կամ նույնիսկ մշտա-
 կան բանվորն, այսինքն մետաղագործը, — միշտ կգտնի՞
 նա արդյոք իր սովորական կերակուրն այնտեղ: Այս
 բանը, դժբախտաբար ամեն տեղ չես ճարի մեզ մոտ:

Իսկ յերկրորդ դեպքում, ճաշարանները չեն ձգե-
 րում սպառողին, հակառակ նրա սովորութեան,
 այնպիսի կերակուր տալ, վորն իր բաղադրութեամբ,
 քանակով և այլն կարող է վերականգնել նրա վատ-
 նած եներգիան ու սնել նրա որդանիզմը: Հասարա-
 կական սնունդը հենց նրանով էլ գնահատելի յե վոր
 նա մասսաների գիտակցութեան մեջ պիտի ամբայնի
 կանոնավոր սննդառութեան գաղափարները և վոչնչաց-
 նի հին հալացքներն ու սովորութեանները:

*) Գիտալի կոչվում է այն կերակուրը, վոր որդանիզմը
 պահանջում է հիվանդագին յերևույթների հետևանքով — կաթնե-
 ղեն, բուռեղեն, ձեռած-արորած սնունդ և այլն:

կան, իհարկե բացառութեանն: Որքինակ, շատ
 զբեցին Ստալինգրադի Կ. Բ. Կ.-ի մասին, վորը կա-
 րողացել է՝ միջոց գտնել տայլո. եժան, համեղ ու միև-
 նույն ժամանակ սննդարար ճաշ, այս նպատակի հա-
 մար ոգտագործելով մսի եժան մասերը, բաց համա-
 պատասխան կերպով վերածաղկելով այն, սակայն կան
 և ուրիշ կոոպերատիվներ, վորոնք այս ասպարիզում
 ունեն զգալի նվաճումներ: Խոսքն այստեղ այն մասին
 է, վոր այդ նվաճումներն ամեն տեղ չկան:

Այս բոլոր թերութեաները մեզ հարց-
 նում են այնտեղ, վոր հասարակական
 սննդով ղեռ շատ քիչ թվով մարտիկ են
 ապրում. վոր քննակիք փաստորեն ղեռ
 շատ քիչ է մասնակից հասարակական
 սննդին:

Այսպես մանրամասն կանգ առնելով հասարակա-
 կան սննդի թերութեանների վրա, մենք բնավ չենք
 կամենում սուղիք զցել մեր ունեցած հաջողութեանն-
 րի վրա: Կատարված է շատ մեծ աշխատանք, նա չե-
 րեում է, արդեն ինքն զգացնել է տալիս իր գոյու-
 թյունը, սակայն ղեռ ավելի մեծ աշխատանք կա կա-
 տարելու:

Պետք է միանգամ բնդմիշտ յուրացնել, վոր հա-
 սարակական սնունդը կենցաղային կոոպերատիվ աշ-
 խատանքի կարևորագույն ճյուղն է, վոր հասարակա-
 կան սնունդը վճռական ղեր է խաղում կենցաղի կու-
 լեկտիվացման հարցում:

Պետք է հե-
 սացնել ված ձևերի զարգացման հետ միաժամա-
 սանք կերա- նակ, կոոպերացիան, քանի ղեռ անկարող է
 կուր պոս- ղնդգրկել բանվորական ամբողջ բնակչու-
 րուսիլը թյանը, — պիտի ղբազվի և ուրիշ գործով:

Կոոպերատիվները պիտի կազմակերպեն կիսամշակված մթերքների վաճառք նույն ճաշարաններում կամ հատուկ վաճառատներում, վորպեսզի գոնե դրանով կարելի լինի հեշտացնել տանը կերակուր պատրաստելը: Համարձակ կերպով կարելի չի և պետք է վաճառել արդեն պատրաստի կատրեաներ, վորը պետք է միայն տապակել, մաքրած, պատրաստի բանջարեղեն, վոր կարելի լինի ուղղակի չեփել և այլն:

Մոսկվայի կոոպերացիան վաղուց մտածում է այդ մասին, բայց արդյունքները դեռ չեն չեղևում: Մակայն չե՞ վոր այդ դեպի չափով կհեշտացնեն կերակուր պատրաստելը:

Բանվոր բնակչությանը պետք է ոգևիլ գարգացնելու հասարակական ներգործի գործը

Հասարակական սննդի հարցերը պետք է դնել ավելի սուր կերպով, քան մինչև այժմ: Պետք է աշխատել, վորպեսզի բանվորական մեծ տները ու ավանների նոր շինարարության ժամանակ նախատեսվեն համապատասխան շենքեր ճաշարանների ու խոհանոցների համար. պետք է աշխատել նաև, վորպեսզի բանվորների կենցաղի բարելավման համար արդյունաբերությունից հատկացվող ֆոնդի մի մասը գործադրվի այս լուրջ գործի վրա:

Կոոպերացիան աստիճանաբար ձեռք է բերում փորձառութուն, կամաց-կամաց վերանում են թերութհոռւները, սակայն պետք է լայն ծավալել ցանցը, պետք է ավելի լավ ու կատարելագործված հիմքեր վբա դնել աշխատանքը և այստեղ, ինչպես վերևում ել նշեցինք, անհրաժեշտ է հենց իր՝ բանվոր բնակչության աշակցութունը:

Մասնավորապես, մեծ նշանակութուն կարող են ունենալ այսպես կոչված ինքնաշխատ կոլեկտիվները:

Մի խումբ բանվորներ՝ բանվորուհիներ կամ տանտիկիհներ, վոր ապրում են մի տան մեջ, կարող են միանալ միատեղ կերակուր պատրաստելու համար: Ուրիշ խումբով, փոխանակ 20-25 պրիմուսի, այդքան էլ կաթսաների, խոհանոցային սեղանների ու խոհանոցային կենցաղի «հրաշալիքների», կազմակերպվում է մի խոհանոց, վորտեղ վարձու բանվորական ուժի միջոցով (խոհարար կամ խոհարարուհի ու ամաններ լվացող) և թե հենց իրենց կոլեկտիվի անդամների հեթական աշխատանքով, պատրաստվում են ճաշեր կոլեկտիվի բոլոր անդամների ու նրանց ընտանիքների համար:

Այդպիսի կոլեկտիվները պետք է ցուցակագրվեն տեղական կենտ բան. կոոպերատիվում, կամ սպառ. ընկերություն մոտ և վերջինները պարտավոր են ցուց տալ նրանց ամեն տեսակ ոժանդակութուն. մատակարարել ինվենտար, մթերքներ, նախորոք կատարված պատվերի համաձայն, առ հրահանգներ ու հսկել նրանց աշխատանքի վրա և այլն:

Այն տեղերում, վորտեղ կան արդեն խոշոր մեքենայացված ճաշարաններ ու գործարան-խոհանոցներ, կարելի չի ստանալ վնչ միայն մթերքներ կոոպերատիվի վաճառատներից ու պահեստներից, այլ և կուսաֆաբրիկատներ, վորն ավելի մեծ չափով կկրճատի ու կհեշտացնի աշխատանքը: Հարկավոր է միայն, վոր բնակարանային կոոպերացիան ևս ոգնութուն ցուց տա այդպիսի կոլեկտիվներին, տալով ու սարքավորելով նրանց համար համապատասխան խոհանոց: Ծաշի

ընդհանուր սենյակներ ունենալն, իհարկե, շատ ցանկալի չե, և դրանք կմտտեցնեյին կոլեկտիվի անդամներին, սակայն չլինալու դեպքում կարելի չե միատեղ պատրաստել միայն ճաշերը և ապա բաժանել տները:

Այդպիսի կոլեկտիվները կարող են խնայել հարավոր տանտիկիներէ ժամանակը, միջոցներն և ուժը և մղել նրանց դեպի ավելի արդյունավետ հասարակական-ոգտակար գործունեութեան ուղին:

Ամփոփելով ասվածները, պետք է նշել, վոր այսօրվա պայմաններում, չերբ մենք գործ ունենք կենցաղի վերակառուցման հարցերի շատ վճռական դրույթի հետ, հասարակական սննդի արդի դրութեանը բնավ չի կարող բավարարել հասունացած պահանջները: Հասարակական սննդի խնդիրները քաղաքներում, մերձավոր շրջանի համար կարելի չե ձեռավորել հետեյալ կերպով.

Հասարակական սննդի զարգացման տեմպերը քաղաքում պետք է ամեն կերպ ուժնղացնել: Անհրաժեշտ է հնգամյակի վերջին հասարակական սննդի ասպարեզ գրավել քաղաքային բնակչութեան մոտավորապէս 30—35 տոկոսը և արհմիութեանական կազմակերպված բնակչութեան առնվազն 60 տոկոսը առանձին ուշադրութեան պետք է դարձնել արդյունաբերութեան հիմնական ճյուղերի բանվորներին ու նրանց ընտանիքների անդամներին ընդգրկելու վրա:

Հասարակական սննդի ձեռնարկութեան հիմնական տիպարը պետք է համարել գործարան-խոհանոց ու մեքենայացված ճաշարանները պետք է գտնվել բանվորական ռայոնների կենտրոնում և հանդիսանալ միջ միայն իբրև կերակուր պատրաստելու ու բաց թող

նելու տեղեր, այլ միաժամանակ և իբրև գործարաններին, կոմունա-տներին, դպրոցներին, բուհերին կից բաշխիչների ցանցի մատակարարման կենտրոնական կայաններ:

Բաշխիչների ցանցը կարող են լինել չերկու տիպի: Առաջինները ճաշի դահլիճներ են բուհետով և ունեն միայն տաքացնելու գործիքներ, պատրաստի կերակուրն ուղարկվում և ալգտեղ անմիջապես սպառողներին բաժանելու համար, իսկ մյուսներին ուղարկվում են կիսաֆարբիկատներ, վորոնք մեքենայական միջոցներով պատրաստվում են գործարան-խոհանոցներին կից կենտրոնական հատուկ բաժանմունքներում և լիովին պատրաստվում արդեն բաշխման կետերում միայն: Յերկու դեպքումն էլ կերակրի մատակարարումը ժամանակի տեսակետից պետք է հարմարեցված լինի բանվորական մասսաների աշխատանքային պայմաններին, հաշվի առնելով աշխատանքը, բազմաներթութուն և այլն:

Բաժանարարների ցանցի հետ միատեղ սպառողական կոոպերացիան, բնակարանային կոոպերացիայի հետ միասին, պետք է ընդլայնեն խոշոր տներում ինքնաշխատ կոլեկտիվների կազմակերպման պրակտիկան, վորոնք նույնպես կարող են լինել չերկու տիպի — կիսաֆարբիկատներ ստացողներ ու հում մթերքներ ստացողներ: Մենզի ռացիոնալացման ձեռնարկումները կազմի, ծախսերի բաշխման նորմայի և այլ տեսակետներից պետք է տարածվեն և ալգ կոլեկտիվների վրա: Բնակարանային կոոպերացիան իր շինարարական պլաններում պիտի նախատեսի ընդհանուր

ճաշարարնների, կոլեկտիվ խոհանոցների և այլ ձեռնարկությունների անհրաժեշտությունը:

Բացի այդ, պետք է մաքսիմալ չափով ընդլայնել ինչպես պատրաստի ճաշեր, այնպես էլ կիսաֆարրիկատներ տուն բաց թողնելու պրակտիկան, միաժամանակ ձեռնարկելով տնային տնտեսությունը պարզացնելու և բացիոնալացնելու միջոցներ (եկեկտրական ու գազային տաքացնող գործիքներ, պլեստաներ, և այլն): Այս միջոցները պետք է նախատես, վորպեսզի ընտանեկան կենցաղում վնչ միայն հիմնական սնունդը (ճաշ) ստացվի հասարակական սննդի ձեռնարկություններից, այլև՝ նախաճաշն ու ընթրիքը:

Առաձին ուշադրություն պետք է դարձնել լեռնաբանների ու դիետային սննդի վրա: Պետք է աշխատել հասարակական սննդի ասպարիզում ընդգրկել կազմակերպված ամբողջ ընկալությունը՝ դարձնելով մանկապարտեզներում և այլն: Այստեղից ինքնին հետևում է, վոր մանկական հատուկ ճաշարանների, բաշխիչ բազաների ու խոհանոցների կազմակերպումը մանկական հիմնարկություններին կից՝ պետք է ամենալայն կերպով տարածվի:

Վոչ պակաս ուշադրություն պետք է դարձնել սննդի կազմակերպման վրա հանգստի վալրերում ու կուլտուրական հիմնարկներում՝ ակումբներում, ու գիշերային ու սովորական սանատորիաներում հանգրստի տներում ստատիոններում, հրապարակներում, ամառանոցներում և այլն:

Ազատ ժամանակի բացիոնալ ոգտագործման առողջ ու կուլտուրական հանգստի խնդիրները նշանակալից են վնչ միայն իբրև աշխատանքի արտադրողականությունը

բարձրացնող գործոններ, այլ և իբրև կենցաղը կազմող ու բարձր, առողջացնող ֆակտորներ: Այդ պատճառով էլ կոոպերացիան այստեղ ևս պետք է կազմակերպվի իր ճաշարանները, նախաճաշերը, բուֆետները, զինվորական խոհանոցներն ու բաշխիչ բազաները:

Նոր կառուցվող օոցրալատական քաղաքներում և բանվորական ավաններում հասարակական սննդի կազմակերպության ձևերը պիտի ստանան ավելի վրձնական ու պլանայափ բնույթ: Այս պայմաններում միանգամայն տեղին է հարուցանել միջերգային վաճառատների իսպառ վերացման հարցը: Նբանց տեղ պետք է ստեղծել սննդի խոշոր ձեռնարկություններ, վորոնք բաղկացած լինեն գործարան-խոհանոցներից և այդ պիտի միջերգների բաղխիչ կետերից, վորոնք դեռ չեն մտել կոլեկտիվ գործածության մեջ: Բաշխիչ պուլակտերի խնդիրը պետք է այնպես լուծվի, վոր այդ արդեն մշակված միջերգներն այնտեղ կշուվեն, վերստուգվեն և հատուկ արոնեմանտային սխտեմով ուղարկվեն ընկալության՝ իրենց տներում:

Բոլոր պայմաններում, սակայն, գների հարցը չի կորցնում ի նշանակությունը: Պետք է ձգտել կատարելապես համապատասխանեցնելու սննդի արժեքը բանվորական ընտանիքի բյուջեին, միաժամանակ բարձրացնելով կերակրի վորակն ու սննդարարությունը:

Մոտելով հասարակական սննդի մասին, կենցաղի վերակառուցման տեսակետից, միաժամանակ անհրաժեշտ է վճռականորեն վերացնել կեղան ու հակաառողջապահական պայմանները, վորոնց մեջ դեռ շարունակում են մնալ մեր հասարակական սննդի ձեռնարկու-

թյունները, կուլտուրական սովորույթները պիտի պատկաստվեն վնչ միայն հատուկ կուլտիլիմարիկներում, այլ այն տեղերում, վորտեղ կղիմեն մեր հիմնական բանվորական մասսաներն իրենց սպտոդական կարիքները բավարարելու համար:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՅՐԵՐԻ ԽՆԱՍՔԸ

Յերեխաների խնամքը կենցաղային աշխատանքի կարեւորագույն մասն է

Բանվորական ընտանիքի կենցաղի վերակառուցման այլ տեսակի աշխատանքների թվում, յերեխաների հոգատարությունը բնավ յետին տեղը չի գրավում: Մենք տեսանք, վոր յերեխաների խնամքի վրա քիչ ժամանակ չի գործադրվում: Սակայն հարցը միայն ժամանակը չէ: Հարցը պետք է դեռել ավելի խորը:

Քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ բանվորուհին աշխատանքի գնալով, յերեխային թողնում է առանց պատշաճ հսկողութեան, թե ի՞նչ է ստացվում նրանից — ամենքին լավ հայտնի չէ: Քիչ չի այն յերեխաների թիվը, վորոնք բարոյապես ու ֆիզիքապես խեղանդում են դառնում հսկողութեան բացակայութեան հետևանքով:

Սակայն այս ել դեռ բոլորը չէ: Մեր կուլտուրական հետաճանցությունն, իր բացասական ազդեցությունն է գործում մեր մատաղ սերնդի դաստիարակութեան վրա: Մինչև իսկ այն դեպքերում, յերբ մայրը տանն է, մենք շատ հաճախ կարող ենք ականաւորես լինել յերեխային: դաստիարակելու ամենատղետ պատկեր-

ների: Յերեխաների սնունդը, ընդհանուր առողջապահական պայմանները, ֆիզիքական զարգացումը և այլն մեր բանվորական ընտանիքներում մեծ մասամբ դեռ մինչև այժմս ել մխիթարական պատկեր չունի:

Հետևապես մենք այստեղ կանգնած ենք ուղղակի մեր ապագա սերունդը առողջացնելու, կազդուրելու խնդրի առաջ:

Յեւ վերջապես յերեխաների կանոնավոր դաստիարակութեան միջոցով մենք հնարավորություն ենք ստանում ազդելու և ընտանիքի վրա: Այս հանգամանքը ևս, կարծես, առանձին ապացույցի կարիք չունի:

Ահա թե ինչու յերեխաներին սպասարկող հիմնարկությունները հարցը չափազանց մեծ դեր է խաղում բանվորական ընտանիքի կենցաղը վերակառուցելու գործում:

Ո՞վ պիտի գրագվի մանկական գործով պարապելը: Չէ՞ վոր գոյություն ունեն հատուկ պետական մարմիններ, վորոնք վարում են դաստիարակութեան ու առողջապահութեան գործը: Յեթե այդ հարցերով գրագվի կոոպերացիան, ի՞նչ պիտի անեն ապա կուստոզկոմատն ու Առժողկոմատը:

Բաց բանվորական կոոպերացիայի անկիւնների մեջ մտնում է արդյոք այս գործով պարապելը: Չէ՞ վոր գոյություն ունեն հատուկ պետական մարմիններ, վորոնք վարում են դաստիարակութեան ու առողջապահութեան գործը: Յեթե այդ հարցերով գրագվի կոոպերացիան, ի՞նչ պիտի անեն ապա կուստոզկոմատն ու Առժողկոմատը:

Նման հարցեր, դժբախտաբար, դեռ մինչև այժմ ել հաճախ լավում են կոոպերատիվ շատ աշխատավորների կողմից, յերբ խոսում հս նրանց հետ կենցաղային հարցերի մասին:

— Մեր գործը, — ասում են — ապրանքներ մատակարարելն է, հասարակական սննդի կարգավորու-

մը, հաց թխելը, իսկ յերեխաների մասին թող ուրիշ-ները հոգան:

Այսպես դատող ընկերները մոռանում են մի շատ լուրջ հանգամանք: Մեր պետությունը, վոր իր գոյության 13 տարվա ընթացքում կատարեց այսքան մեծ աշխատանքը, չի կարող վնչ ըստ իր ուժերի և վնչ էլ ըստ նյութական միջոցների կատարել մի անգամրաց ամեն բան: Ծծկեր յերեխաների ու նախադպրոցական յերեխաների համար բավաբար չափով հիմնարկություններ ստեղծելու համար հարկավոր են այնպիսի հսկայական միջոցներ, վոր մեր պետությունը ներկայում չունի: Այստեղից հետևում է, վոր մեր Լուստող-կոմատի նախադպրոցական հիմնարկությունները 2-2¹/₂ տարի սրանից առաջ ընդգրկում էին մանուկները I¹/₀-ը միայն *):

Այդ ընդգրկումն առանձնապես չի մեծացել և այսօր: Իսկ ինչ և նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր մանուկներից 99⁰/₀ գտնվում են աննորմալ դրության մեջ: Այդ նշանակում է, վոր բանվոր-մայրը գնալով աշխատանքի ու յերեխան թողնելով անխնամ, բախտի բերմունքին, շարունակ մտածելով ու անհանգստանալով նրա մասին, անկարող է արդյունավետ աշխատանք տալ: Իսկ աշխատանքից աղտոտվելուն պես, նա, միևնույն է, դարձյալ կլսած է տանը, վորովհետև յերեխան խնամք է պահանջում:

Այս գործում պետությանն, ոգնության են հասնում արհմիություններն ու մյուս կազմակերպություն-

*) Բանվորական կոոպերացիայի՝ կանանց շրջանում կատարելիք աշխատանքի վերաբերյալ 1928 թ. 23 | ի բնդակցության սղագրությունը:

ները, աջակցություն պիտի ցույց տա և կոոպերացիան:

Այս մեկ: Իսկ յերկրորդն ահա թե ինչն է: Յեթի մենք լուրջ խոսում ենք կանանց կոոպերացիայի մեջ ներգրավելու մասին, յեթի մենք վոչ միայն խոսքով, այլ գործով կամենում ենք, վոր բանվոր-կինն ու տանտիկինը հիրավի ակտիվ մասնակցություն ունենա կոոպերատիվ աշխատանքներում, — ապա պետք է ըստեղծել դրա համար անհրաժեշտ պայմաններ: Կոոպերացիան գործով պիտի ցույց տա, վոր իր կին-փայտերերի շահերը թանգ են իր համար: Կերպակս յերեխաների խնամքի համար անհրաժեշտ են մի շարք իրեր, վոր մայրերն ուղղակի գնում են՝ հագուստ, սխալակեղեն, մահճակալներ, համապատասխան ամանեղեն, առողջապահական իրեր և այլն: Սրանց մասին արդեն կոոպերացիան պարտավոր է հոգ տանել:

Այս բոլոր նկատառումները առաջ բերվեցին, վորպեսզի ապացուցենք, վոր մանուկների ու միաժամանակ մայրերի հոգսը կազմում է բանվորական կոոպերացիայի կենցաղային աշխատանքի մի անբաժան մասը:

Բայց կա և կոոպերատիվ աշխատավորների մի ուրիշ հատված, վոր այլ կերպ գործնական և մոտենում այս հարցին:

«Լավ, ասում են նրանք, — պետք է ոգնել՝ կոգնենք: Բայց ընկնել այդ գործի յետեից՝ չենք կամենում: Յեվ ինչելով հետևողական, այդ ընկերները գլուխներն աղտոտում են այդ աշխատանքից փողով: Հատկացվու է վորոշ գումար, բաժանվում մի շարք հիմնարկների միջև, պրծավ — գնաց:

Ինչ յեղան այդ փողերը, ինչք վրա գործադրվեցին ինչ շահեցին դրանից բաժնետերերը՝ այս ամենով բնավ չեն ել հետաքրքրվում: Սակայն դրա փոխարեն հետագայում ձեռկերպում են մի հողված՝ «ծախսը ված ե բաժնետերերի կենցաղի բարելավման վրա այսքան հազար ուրբլի»: Յեկ վոչխարներն են վողջ, և գալերը՝ կուշտ:

Բայց չէ վոր այդ փողերով, վոր մաս-մաս բաժանեցին մի քանի հիմնադրություններին, կարելի չեր սարքավորել, առնք, մի չերկու մանկապարտեզ ու վայելուչ կերպով պահել մի յերկու տարի: Այդպիսի աշխատանքը փայտտերերի և առանձնապես փայտերեկանանց համար հավանորեն շոշափելի կլիներ: Բայց ամբողջ ցափը հենց այն ե, վոր փայտտերերի մասին (հասկապես փայտտերերի մասին) հաճախ մոռանում են:

Մոր յեկ մանկան անկյուն եր ու խա նուրբնու

Սակայն, չնայելով այս թերություններին մանուկների խնամատարության ասպարիզում, այնուամենայնիվ բանվորական կոոպերացիան վորոշ աշխատանք կատարել ե:

Առանձնապես տարածված ե կոոպերացիայի աշխատանքի այն ձևը, վոր հայտնի յե «մոր և մանկան» անկյուններ ու խանութներ անուշով: Սրանք հաճախ ունիվերսալ վաճառատների փոքրիկ բաժանմունքներ են, վորտեղ մայրը կարող ե դռնել այն ամենն, ինչ հարկավոր ե իր մանկանը—սկսած մանկական խաղալիքից ու շապկից մինչև մպհճակալ ու վաննա և այլն: Այդ անկյուններն լավ հաստատվեցին ու լավ ել աշխատում են: Դի շարք կոոպերատիվներ այժմ դուրս են գալիս այդ «անկյուններին» շրջանակից ու բաց ա-

նում հատուկ խանութներ, Այդպիսի խանութների առևտուրը սովորաբար վատ չե, վոչնչով չետ չի մնում սովորական խանութներից, հետևապես միանգամայն արդարացում են իրենց ու կատարում մի մեծ ու լուրջ գործ: Նրանք մատակարարում են մայրերին հատկապես այնպիսի ապրանքներ, վորոնք իսկապես պետք են մանկանը: Մեծ մասամբ այդ խանութները, վորոշ դեպքերում նաև անկյունները գտնվում են բժիշկների կամ մայրության ու մանկությանը պաշտպանության տեղական բաժանմունքների հսկողության տակ: Հատուկ խանութներում չերբեմն կազմակերպվում են փոքրիկ ցուցահանդեսներ մանուկների խնամքի վերաբերյալ, տրվում են բժշկական խորհուրդներ (կոնսուլտացիա) մանկան դաստիարակության հարցերի շուրջը:

Աշխատանքի այդ հետաքրքիր, չափազանց ոգտակար ու անհրաժեշտ ձևը հաճախ՝ առանձին աշխատավորների սխալ մերձեցման շնորհիվ շեղվում ե իր ուղիղ ճանապարհից: Այսպես մի Կ. Բ. կոոպերատիվում նկատվում ե այսպիսի ծայրահեղութուն: «Մոր և մանկան» խանութների կամ անկյունների վրա նայում են իրրև առավելապես կուլտուրական բնույթի հիմնարկության վրա, իսկ բաժնետերերին այդ հիմնարկություններից անհրաժեշտ ապրանքներով սպասարկելու խնդիրը համարում են յերկրորդական: Այստեղից առաջ ե գալիս մատակարարման անկանոնություն, ապրանքների սահմանափակ տեսակներ, գներն անհամաչափություն, վնասով առևտուր և այլն: Ուրիշ Կ. Բ. Կ. այս գործին մոտենում են ուրիշ կերպ, ուրիշ ծայրահեղությամբ:—Այս գործը, դեհ, վտան-

պար, նոր գործ ե, կարելի չե զնապել, այդ պատճառով ել ապահով լինելու համար այս խանութում թուլատրելի չե գների ավելի մեծ հալելում անել սովորականի համեմատութամբ (Յարտուլավի և այլ Կ. Բ. Կ.) և փորձել աղտոնող սաղացներ չեղկար ժամանակ պառկած, անպետք ապրանքներ, թեև զրանք կտրուկ կերպով հակասում ե այդ տիպի խանութի ամբողջ նպատակին:

Այդ չերկու ծայրանկուլություններն ել փչացնում են այս լավ գործը:

«Մոր և մանկան» խանութների ու բաժանմունքների մյուս թերություններն այն ե, վոր թուլ էն կապերը «մայրության ու մանկության պաշտպանության» բաժանմունքների հետ ու բավարար չափով չեն կանոնավորված հասարակական-մասսայական աշխատանքները, թեև ավելի հարցել ում կան և մեծ նվաճումների շատ ցատուուն որինակներ: Տուտայի Կ. Բ. Կ. որինակ, անկյունին կից կազմակերպել ե մի առանձին ոժանդակող հանձնաժողով, ընարվել ե «անկյունների բարեկամների» համեմատաբար ընդարձակ շրջանից: Այդ հանձնաժողովը կազմակերպում ե զբոսայգիներ, զեկուցումներ գնորդների համար և հենց վաճառատան մեջ: Կանոնավոր կապ ե հաստատված մանկական բոլոր հիմնարկությունների հետ և մինչև իսկ ծննդաբերական տան հետ, վորտեղ մանկաբարձուհիներից մեկը—հանձնաժողովի անդամ—զբույցներ ե ունենում ծննդկանների հետ անկյունի և նրա նշանակության մասին:

Այդ աշխատանքը պետք ե համարել որինակելի:

Այդ պատճառով ել Տուտայի Կ. Բ. Կ. բաժնետերերը գնահատում են իրենց «Մոր ու մանկան անկյունը»:

Այնուհետև լալն տարածված են այժմ **Մանկական հրապարակներ** կոտպերտիֆների մանկական հրապարակները, վորոնք կազմակերպվում են ամառային սեզոնում: Այս լավ նախաձեռնությունը պետք ե ամեն կերպ խրախուսել, քանի վոր բոլոր մանուկները հնարավորություն չունեն ամառները դուրս գալու քաղաքից: Հրապարակները լավ են և նրանով, վոր մի անգամից կարող են մեծ քանակությամբ մանուկներ ընդգրկել այն ժամանակ, յերբ մըշտական մանկապարտեզներն սպասարկում են սահմանափակ թվով մանուկների:

Մանկապարտեզներ Սակայն, քանի վոր մանկական հրապարակները այնուամենայնիվ ժամանակավոր ձեռնարկումներ են, մանկապարտեզները նրանց վերաբերմամբ շատ ավելի մեծ առավելություններ ունեն, քանի վոր նրանք նախադպրոցական դաստիարակության արդեն ավարտված—վերջավորված ձևն են: Բայց, չերեխ, վորովհետև մանկապարտեզները համեմատաբար ավելի թանգ են նստում, դրա համար ել նրանք ավելի քիչ են տարածված բանավորական կոտպերացիայի ասպարիզում:

Ի դեպ պետք ե ասել, վոր արժեքի հարցում հաճախ սխալվում են, վախենալով մանկապարտեզներ կազմակերպելուց:

Այսպես, որինակելի նախահաշիվով 50 մանկան համար հրապարակ սարքավորելն ու չորս ամիս պահելը, ինչպես փորձն ել ցույց ե տվել, նստում ե մոտավորապես 1235 ո. 86 կ. կամ 24 ո. 72 կ. մի ման-

կանը, իսկ մանկապարտեզի սարքավորումն ու մի ամբողջ տարի 50 յերեխա պահելը նստում է 4910 ուրբի 31 կոպ. կամ մի մանկանը 98 ու 21 կոպ.:

Բաց չեթե մի կողմ թողնենք սարքավորումը, վոր կատարվում է մի անգամ միայն և վորի արժեքը հաշվվում է մոտավորապես 1355 ուրբի, ապա, ինչպես տեսնում ենք, մնացածն այնքան էլ մեծ գումար չի կազմում:

Համենայն դեպս 1927—28 թվի վոչ բոլորովին լրիվ ու արդեն բավական հնացած տեղեկութունների համաձայն, վոր կազմել է Կենտ. Բան. սեկցիան և միայն աննշան թվով կազմակերպությունների վերաբերմամբ, միջին թվով 1—2 հրապարակ է ընկնում յուրաքանչյուր Կ. Բ. Կ.-ի և 8—9 Կ. Բ. Կոոպերատիվի՝ մի մանկապարտեզ: Ներկայումս այդ աշխատանքը, լեղած տեղեկութունների համաձայն, ղգալի չափով աճել է:

Մտուրներ Շատ կոոպերատիվներ կազմակերպում են և մտուրներ, նրանց կատարած գնահատելի դերի մասին բանվորուհու համար, խոսելու կարիք չկա: Միջին թվով, դարձյալ նույն վոչ լրիվ տեղեկութունների համաձայն 8—9 կազմակերպություններին մի մտուր է ընկնում:

Այսպես Մի քանի կոոպերատիվներ հետաքրքիր մայրերի հե կերպով այդ հիմնարկություններն ոգտագործում են և այլ աշխատանքի համար: Այսպես, մանկապարտեզներին կից տեղ-տեղ կազմակերպվում են մայրական խմբակներ, վորտեղ կանոնավոր և պարբերական դրույցներ են լինում յերեխաների խնամքի, դաստիարակութան ու տնային տնտեսութան

մասին: Հաճախ ղեկավարներն ու բժիշկը այցելում են յերեխաներին իրենց տներում ու այնտեղ զբույց ունենում ծնողների հետ և այլն: Ինքնին հասկանալի չէ, վոր այս տեսակի աշխատանքն ավելի ևս բարձրացնում է կոոպերատիվի մանկական հիմնարկությունների արժեքը:

«Մոր և մանկան» անկյուններն էլ հաճախ ցույց են տալիս բազմակողմանի աջակցություն: Մի քանի կոոպերատիվներ, որինակ իրենց գործազուրկ փաշատիրուհիներին տալիս են յերեխաներին իրեր ասեղնագործելու աշխատանք, տեղ-տեղ նույնիսկ կազմակերպվում են հատուկ արհեստանոցներ գործազուրկ փաշատիրուհիներին համար: Այս տեսակ ձեռնարկումները, բացի բոլոր մնացածից, ստեղծում են և հյուսթական շահագրգռություն, վորն իհարկե մեծ ժողովրդականություն է տալիս կոոպերատիվի աշխատանքներին:

Կոնսուլտացիաներ (խորհուրդներ) Մի շարք կոոպերատիվներ ավելի առաջ են անցել իրենց փաշատիրուհիներին կենցաղային կարիքներն հոգալու հարցում (Սվերտովսկի, Մինսկի և ուրիշ շատերը), կազմակերպելով մշտական բժշկական կոնսուլտացիաներ (խորհուրդներ) հղիների ու մայրերի համար: Այդպիսի հատուկ հիմնարկների թիվը ղեռնա վորք է. — վնչ լրիվ տեղեկությունների համաձայն, միջին թվով 19 կազմակերպություններին ընկնում է մի կոնսուլտացիա, — սակայն սկզբնական շրջանում այսքանն էլ լավ է: Ներկայումս այդ կոնսուլտացիաների կազմակերպումը մեծ ծավալ է ընդունել: Ծիշտ է, դրանք հաճախ առանձին հիմնարկություններ չեն, այլ միացած են «Մոր և մանկան» խանութների ու բաժանմունքների հետ:

Մանկական
սենյակներ

Աշխատանքային որը վերջանալուց հե-
տո բանվորուհին կամ տանտիրուհին կա-
մենում ե խելացի կերպով անց կացնել
իր ազատ ժամանակը: Բայց, որինակ, ակումբ գնալ
նա չի կարող, ուն թողնի յերեխաներին: Այս նպա-
տակով վարող կոոպերատիվներ գեո միայն ձեռնարկել
են կազմակերպելու ակումբներին կից այսպես կոչված
«մանկան սենյակներ»: Քանի մայրը պարապում ե
խմբակում, լսում ե դասախոսութուն կամ նայե կի-
նո-նկարը, յերեխան գտնվում ե առանձնապես սար-
քավորված շենքում, փորձված մարդկանց հսկողութան
ու խնամքի տակ: Այդ սենյակներում կան խաղալիք-
ներ, հանգստանալու մահճակալներ և այլ առարկաներ
մանուկների ժամանակավոր խնամքի համար:

Սանատո-
րիաներ ու
հանգստի
սեն

Բացի սրանից, մի քանի կոոպերա-
տիվներ մանկական սանատորիաներում
վերցնում են տեղեր իրենց փայտտիրու-
հիների յերեխաների համար, իսկ վոմանք
ել սանատորիաներում ու հանգստի տնե-
րում վարձում են անդեր հենց իրենց փայտերերի ու
փայտտիրուհիների համար: Վերջին ձեռնարկումները
մասսայական բնույթ չեն կրում, իհարկե, սակայն այնու-
ամենայնիվ տեղի յեն ունենում ներկայում: Առանձ-
նապես մեծ աշխատանք ե կատարել այս ասպարիզում
կիևի Կ. Բ. Կ., վորը ժամանակին կազմակերպել եր
առանձին մանկական սանատորիա իր փայտերերի յե-
րեխաների համար:

Կար ու ձեռի
դասընթաց-
ներ ու խմբ-
քակներ

Վերջինը վոր կուղեյինք նշեր վեր-
ջերս բավական լալն ծավալվող կարի ու
ձեի դասընթացներն են փայտտեր-տան-
տիրուհիների համար: Շատ հաճախ կար
ու ձեի այդ դասընթացների հետ միացը-

նում են և մի շարք զբույցներ կամ կոոպերացիայի
վերաբերյալ սխտեմատիկ պարապումունքներ: Չի կարելի
անտեսել, վոր տանտիրուհիներին այդ ձևով կոոպերա-
ցիայի ազդեցութան շրջանը զբավելը միանգամայն
հաջող ձե ե: Դժբախտաբար, մեր տրամադրութան
տակ չունենք ճիշտ տվալներ կոոպերատիվային աշ-
խատանքի ալս ձեի վերաբերմամբ, սակայն, դասելով
այն առանձին տեղեկանքների հիման վրա վորոնք ըս-
տացվում են կենտ. բան. սեկյրայում, և համաձայն
կոոպերատիվ մամուլում լույս տեսնող տեղերից ստաց-
ված թղթակցութունների, կարելի յե ասել, վոր այդ
խմբակներն այժմ քանակով աճում են և լավ արդյունք-
ներ են տալիս: Առանձնապես հաջող կերպով կատար-
վում ե այս աշխատանքը Կրիմեոնուզի Կ. Բ. Կ. ում:
Այնտեղ գոյութուն ունեցող կար ու ձեի դպրոցը, կո-
ոպերատիվային գրագիտութան պարտադիր ուսուցու-
մով, տվել ե արդեն բավական մեծ թվով արհեստ սո-
վորած ու կոոպերատիվորեն միանգամայն գրագետ շըր-
ջանավարտ-տանտիրուհիներ: Նրանք բոլորն ել այժմ
ակտիվ աշխատանք են կատարում կոոպերատիվի գա-
նազան մարմիններում:

Նույն ձառնապարհով գնաց և Արխանգելի Կ. Բ. Կ.
և շատ ուրիշները:

Պետք ե նշել, վոր այս աշխատանքը մեծ հաջո-
ղութուն ե գտնում, նա բարձրացնում ե կոոպերա-
ցիայի հեղինակութունը կանանց մասսաների աչքում
և հենց դրանով ել նրանք ավելի ու ավելի յեն մոտե-
նում կոոպերացիային ու նրա միջ հասարակական ու
գործնական աշխատանքներ կատարում:

Այսպիսով կամաց-կամաց կոոպերացիան պալքար

ե մղում կնոջ ազատագրման, բանվորական ընտանիքում նրա կենցաղային պայմանները առողջացման ու բարելավման համար:

Ս.Վելի վրձ-
նախանու-
րյուն, ավե-
լի Եախա-
ձևնու-
րյուն մաս-
սաների
կողմից

Պետք է ասել, վոր այս մեծ ու լուրջ գործի զարգացման տեմպերն այսօրվան համար այլևս բավարար չեն: Այժմ պետք է ավելի վճռական, ավելի յեռանդուն գործել այդ ուղղութիւնում: Բանվորական ընտանիքի կենցաղային պայմանները փոփոխմանը պետք է մոտենալ հեղափոխական տրամադրութեամբ, այն ժամանակ

միայն կտաացվեն ավելի զգալի աբդյունքներ: Կենտնիւթյունը իր դիրքակալային ցուցմունքներով բազմիցս հրավիրել է իր անդամները ու բաժանմունքները ուշադրութեանն այդ աշխատանքի թափն ընդլայնելու անհրաժեշտութեան վրա: Մասնավորապես 1929 թ. հոկտեմբերին մի շրջաբերական ուղարկվեցին Արհմիութիւնների Համառուտ. Կենտ. Միութ., Կենտմիութ. Բնակչինկենտմիութ., Լուսժողկոմատի, Առժողկոմատի կողմից բանվորուհու կենցաղային պայմանները բարելավելու մասին, վոր ասված է հետևյալը.

«Բանվորուհուն սոցիալիստական շինարարութեան ու հասարակական աշխատանքի մեջ լայն կերպով գրավելու ու նրա վորակավորումը բարձրացնելու խնդիրը պահանջում է նրա կենցաղային կարիքները սպասարկող հիմնարկութիւնների և առանձնապես ակտիվիստ բանվորուհու հասարակական աշխատանքի ժամանակ նրա կարիքները սպասարկող հիմնարկութիւնների աշխատանքներն ամեն կերպ հարմարեցնել այդ կարիքների սպասարկմանը: Այդ իսկ պատճառով բոլոր կազ-

մակերպութիւնները, չսահմանափակվելով միայն ներքևում հիշված ձեռնարկութեանը, իրենք պիտի վորոնեն ու մտցնեն մտուրները, նախադպրոցական հիմնարկութիւնների, լվացքատները և այլն հիմնարկները գործունեութեան մեջ աչնպիսի կարգ ու կանոն, վորը ամենամեծ չափով կին-բանվորուհուն ու հասարակական աշխատավորուհուն ոգնի ազատվելու յեքեխաների հողատարութեանից ու այլ կենցաղային կարիքներից դոնե իր հասարակական պարտավորութիւնները կատարելու ժամանակը

Այդ նպատակով առաջարկվում է կիրառել հետևյալ միջոցառումները՝

1. Իրենց տեղադրութեամբ համեմատաբար ավելի համապատասխան մտուրներում մտցնել յեքեկոյան հերթապահութիւն՝ սպասարկելու համար առաջին հերթին այն մանուկներին, վորոնց մայրերը յեքեկոյան զբաղված են լինում հասարակական աշխատանքով կամ սովորում են յեքեկոյան խմբակներում, դպրոցներում կամ դասընթացներում: Մշակել այն հարցը, թե վճրքան հնարավոր է բոլոր մտուրներում աստիճանաբար մըտցնել յեքեկոյան հերթապահութիւն, կիրառելով այդ միջոցն այն տեղերում, վորտեղ այդ հերթապահութեան ավելի մեծ կարիք է զգացվում: Այն ակտիվիստ-բանվորուհիների մանուկներին, վորոնց մայրերն զբաղված են լինում գիշերային հերթապահութեամբ, տեղ տալ ցերեկվա մտուրներում այն ժամանակ, յերբ նրանց մայրերը զբաղված են ցերեկվա հասարակական աշխատանքով:

2. Ընդլայնել նախադպրոցական հիմնարկութիւններին կից յեքեկոյան խմբակների, տկումբների, դրպ-

րոցներին, լուսավորութեան տներին, տնային մտուրլներին, բնակարանային կոոպերատիվ ընկերութիւններին, բանվորական հանրակացարաններին ու այլազմակերպութիւններին կից աշխատող նախադպրոցական և մանկական սենյակների կազմակերպման պրակտիկան, ինչպես նաև գիշերային հերթապահութեամբ զբաղված բանվորուհիների յերեխաների, ցերեկվա սպասարկումն աչք հիմնարկութիւնների միջոցով: Մտցնել այդ հիմնարկութիւններում տոն և հանգստի օրերին աշխատանքի կազմակերպման պրակտիկա:

3. Մտուրներն ու նախադպրոցական հիմնարկութիւններն ընդունելիս, նյութական ու բնութանկան հախտաբ պայմաններում, առավելութիւնն տալ այն բանվորուհիների յերեխաներին, վորոնք ունեն հասարակական աշխատանքի մշտական բեռնավորում: Այս կարգը տարածել և այն բանվորուհիների վրա, վորոնք սովորում են լիկկայանի դպրոցներում, խմբակներում ու դասընթացներում:

4. Կազմակերպել ժամանակավոր մտուրներ, մանկական սենյակներ ու այլ դպրոցական հիմնարկութիւններ զանազան հասարակական կամպանիաների ժամանակ՝ այդ կամպանիաներին ակտիվ մասնակցող կանանց յերեխաների համար, նույնպես և մասսայական եկսկուրսիաներ կազմակերպելիս:

5. Հնարավորութեան սահմաններում կազմակերպել մանկական սենյակներ լիկկայաններին կից՝ տեղավորելու համար բանվորուհիների յերեխաներին, յետի նրանք զբաղված են դպրոցում:

6. Համեմատաբար խոշոր կենտրոններում հիմնել նախադպրոցական հիմնարկութիւններ-ինտերնատներ

այն ակտիվիստ կանանց յերեխաների համար, վորոնք հասարակական բեռնավորման կարգով յերկար ժամանակով գործուղվում են զանազան տեղեր (ցանքի կամպանիաներ և այլն) կամ դասընթացներ վերապատրաստվելու և սովորելու համար:

7. Ընդլայնել մանկական հիմնարկութիւնների կազմակերպումը բանվորուհիների բնակած վայրերում և մտուրների ու նախադպրոցական հիմնարկութիւնների կազմակերպումը սանատորիաներին ու հանգստի տներին կից՝ բանվորուհիների ու հասարակական աշխատավորուհիների, նաև հանգստանալու և բժշկվելու գնացողների յերեխաների համար:

8. Կարգավորել ըլլացքատներ, բաղնիքներ, ճաշարաններ, մանկական կոնսուլտացիաների և հղի կանանց կոնսուլտացիաների աշխատանքի օրերն ու ժամերն այն հաշիվով, վոր հնարավորութիւնն ունենան զբանցից ոգտվելու և հասարակական աշխատավորուհիները, արտադրական ու հասարակական աշխատանքից ազատ ժամանակ:

9. Կոոպերացիան պեաք է ընդլայնի արկղների ու կրօսկների կազմակերպումը համեմատաբար խոշոր տներում ու բնակարանագոտի վայրի ընկերութիւններին կից՝ նրանց անհրաժեշտ միջերջներ մատակարարելու համար, աշխատանքի ժամերը դասավորելով որակն յերկու անգամ՝ առավոտը վաղ (մոտավորապես ժամի 7—11-ը) և յերեկոյան ուշ (մոտավորապես 7—11-ը): Դրանց աշխատանքի պրակտիկայում մտցնել նախորդ ստացված պատկերներով մատակարարելու սխտեմ:

10. Վերև հիշված միջոցառումներն ուժեղ կերպով

ծավալելու համար համապատասխան հիմնարկությունները նախահաշվում այդ նպատակով նշանակված գումարները պարտադիր կերպով ավելացնելու հետ միասին ավելացնել նաև կոոպերացիայի կողմից այդ նպատակին հատկացվող գումարները, ինչպես և բանվորների ու ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդից կատարվող հատկացումները:

Արհմիութենական կազմակերպությունները պետք է աջակցեն նախադպրոցական հիմնարկությունների համար միջոցներ գտնելուն, մասնավորապես ակումբներում կազմակերպելով ներկայացումներ ու կոնցերտներ և ստացված արդյունքը հատկացնելով նախադպրոցական հիմնարկությունների միջոցներն ու ժողովուրդի նպատակին: Սրա հետ միասին աշխատել վորպեսզի տնտեսական կարմիներն իրենց կողմից վորոշ գումարներ հատկացնեն այդ միջոցառումներն իրագործելու համար:

Միաժամանակ անհրաժեշտ է հետևել վորպեսզի նոր կառուցվող ակումբների ու այլ հասարակական շենքերի, ինչպես և բնակելի տների ու բանվորական ավանների հատակաքածերի մեջ մտցվեն հատուկ շենքեր վերևում հիշված կենցաղային հիմնարկությունների համար և աշխատել վորպեսզի արդեն գոյություն ունեցող շինությունների մեջ ևս հատկացվի այդ նպատակի համար անհրաժեշտ շենքեր:

Այս բոլորի հետ միասին պետք է ընդգծել վոր նյութական միջոցների այս չափազանց սուր ժամանակ վերոհիշյալ միջոցառումների լայն կիրառումը կարելի է լինի ապահովել միայն այն ժամանակ, չեբը ալդ միջոցառումները կարժանանան խորհրդային ամբողջ հա-

սարակայնության լուրջ ուշադրություն ու աջակցությունը և ամենից առաջ կիրադործվեն հենց իրենց՝ այն բան լորուհիների ակտիվ մասնակցությունը, վորոնց հասարակական նախաձեռնությունը, աշխատանքն ու միջոցները պետք է ոգտագործել կենցաղային բոլոր հիմնարկություններում ամենալայն չափերով»:

Պետք է ասել, վոր դժբախտաբար, կոոպերատիվները միշտ չեն ոգտագործել իրենց փայտեր-կանանց հենց այդ ինիցիատիվան ու աջակցությունն այն ժամանակ, չեբը առանձին փաստերը ցույց են տալիս, վոր այդ ուղղությամբ կարելի չեբ շատ ու շատ բան անել: Այսպես, որինակ, Նիժնի-Նովգորոգում դեռ յերկու տարի առաջ փայտերուհիներն իրենք մի անգամ հանգանակում են 1200 ուղբի մանկապարտեզի համար, վորից հետո միայն կԲԿ ոգտություն և գալիս նրանց, ու կազմակերպվում է կանկապարտեզ: Այդպիսի դեպքեր տեղի չեն ունենում, սակայն դրանք մասնակի հատ ու կենտ բնույթ կրում: Այստեղ պետք է նախաձեռնություն համղես բերեն և ակտիվ աշխատանքի կոչվեն հենց իրենք փայտերուհիները: Իայց այս հարցին, ինչպես և միջոցների հարցին մենք կվերադառնանք դեռ:

Այժմ մենք կուղեչինք լրացնել այն ձեռնարկումների ցանկը, վորոնք բավարարվում են գլխավորապես մանուկների ու կանանց կենցաղը:

ԼՎԱՑՔԱՏՆԵՐ ՅԵՎ ԿՐՐ ՈՒ ԿԵՐԿԱՏՆԻ ԸՐՀԵՍԱՏՆՈՑՆԵՐ

Յերբ բոլոր վերոհիշյալ ասպարեզներում կուպերացիան, չնայելով բոլոր դժվարություններին, կատարել է զգալի աշխատանքներ, ապա լվացքատների

ու ամեն տեսակ կար ու կարկատանի արհեստանոցներ կազմակերպելուն նա դեռ ձեռնամուխ չի յեղել ինչպես պետքն է:

Յերգել են, հիրավի տառնձին փորձեր, տեղ-տեղ կառուցվել են վատորակ վացքատներ, զանազան արհեստանոցներ, բայց աշխատանքը նրանց մեջ հաճախ անշնորհք կերպով է կազմակերպվել, և դրա համար ել նրանք շուտով տապալվել են, առանց նույն խկ վորեն հետք թողնելու վալատերէրի հիշողութեան մեջ:

Մինչդեռ վացքը ամենագծվար, ամենափաստակար ու ամենաանհաճո զրծն է, լեթե կատարվում է տանը: Տան վացքից առջև է գալիս խոնավութեան, կեղտոտութեան, դրանից փշանում են բնակարանները և այլն: Նկատված է, որինակ, վոր այն տները, վորտեղ հաճախ վացք են անում, ավելի հաճախակի ու հիմնավոր վերանորոգութեան են պահանջում, քան այն բնակարանները: վորտեղ վացքը ուշ-ուշ են անում կամ բոլորովին չեն անում:

Իսկ կարկատանը: Ո՛վ չի տեսել, թե ինչպիսի բան-վորուհին կամ տանախրուհին իր գրեթե ամբողջ ազատ ժամանակը վատնում է կար ու կարկատանի վրա: Ամենից հետաքրքիրն այն է, վոր այս բանը գիտեն ամենքը, տեսնում են ամենքն ու անուշաղիբ անցնում են կենցաղային այս հարցի մտտով: Յեվ, յերբ շատ թե քիչ բան արված է արհեստանոցներէ վերաբերմամբ, առանձնապես հենամիութեան այսպես կոչված ռացիոնալացման միջոցառումների միջնամուծի (ռացիոնիումի) հրապարակումից հետո, վորտեղ այս հարցի վրա դարձված է զգալի ուշադրութեան, ապա կոտակերատիվ վացքատներէ մատին մինչև վերջին ժամանակներս խոսք անգամ չի լեղել լուրջ կերպով:

Այդ առաջ է գալիս, ըստ յերևութիւն, նրանից, վոր վացքատների կազմակերպումը դժվար գործ է, հժան չէ, և այս ասպարիզում գրեթե չկա վնչ մի փորձ: Միութեան մի քանի քաղաքներում (Մոսկվա, Լենինգրադ, Կիև և այլն) չեղած վացքատները գտնվում են կոմունալ տնտեսութեան և առժողովներների հսկողութեան տակ և ըստ իրենց տիպի շատ ել հարմար չեն կոտակերատիվալին վացքարարական ձեռնարկութեանների համար:

Ինչ տիպի վացքատներ են պետք կոտակերպութեանը: Բաշխարհի:

Առհասարակ վացքատները լինում են յերեք տիպի.—տնայնագործական, վորտեղ ամբողջ աշտանքը կատարվում է ձեռքով, կիսամեքենայացված — կլինիտների անձնական աշխատանքի գործադրութեամբ և կատարելապես մեքենայացված, վորտեղ ամբողջ աշխատանքը կատարվում է մեքենաներով ու վարձու բանվորների ուժով:

Տնայնագործական վացքատները չեն կարող մեկ բավարարել, և յեթե նրանք կարողանան ել վորոշ դեր խաղալ վացքն առանձին տներից վերցնելու տեսակետից, այնուամենայնիվ վացքը նրանցում չափազանց թանկ կնստի և կկատարվի առողջապահական անբավարար պայմաններում: Այսպիս, որինակ, յեթե մի փուլ սպիտակեղևի վացքը տնայնագործական վացքատներում նստում է մոտավորապես 8 ուրբլի, ապա մեքենայական վացքատներում այդ արժեքն իջնում է մինչև 3 ուրբլի:

Բայց կատարելապես մեքենայացված վացքատները նույնպիսի չեն համապատասխանում մեր պայ-

մաններին, այս ձեռնարկութունները կառուցումն ու սարքավորումը չափազանց թանգ կնատի, վորը մեր ուժերից բարձր է: Բացի դրանից, լվալն ու հարթուկելն այստեղ էլ բավական թանգ կնատի շնորհիվ այն բանի, վոր նրանցում պետք է աշխատեն բարձրորակ մարդիկ, վորոնց վարձատրելը շատ թանգ կնատի ձեռնարկության վրա:

Արևմտյան Յիվրոպայի փորձն և կենտրանսեկցիայի հաշվները ցույց են տվել, վոր համեմատաբար ավելի ուսցիոնալ, ետան ու մեր պայմաններին ավելի համապատասխանող ձեռնարկության տիպը կիսամեծքենայացված լվացքատունն է, վորտեղ ինքը տանտիրուհին կամ բանվորուհին ցած վճարով և աշխատանքի ու ժամանակի մինիմալ կորուստով, կարող է լվալ իր շորերը:

Սևաջիւն Բալլերը Ղեկավարվելով այս բոլոր նկատառումներով, Կենտրանսեկցիան վճուց, իբրև փորձ, լվացքի գործը կազմակերպել հատկապես այդ տիպի առաջին կոսպերատիվ լվացքատունը Իվանովո-Վոզնեսենսկում: Իվանովո-Վոզնեսենսկի ընտրվեց, վորովհետև նա մանածագործարանային շրջան է, մեծ թվով բանվորուհիներով, վորոնց համար նման տիպի ձեռնարկությունները բացառիկ լուրջ նշանակություն ունեն:

Բացի այդ, Իվանովո-Վոզնեսենսկում այդ ձեռնարկության համար կան, զուտ տեխնիկական տեսակետից, բարենաջող պայմաններ:

Բանն այն է, վոր մոտ ժամանակներումս այնտեղ կառուցվել էր կոմունալ բաղնիք, վորի առաջին հարկը նշանակված է հատկապես լվացքատան համար:

Այնտեղ արդեն շինված էին վորոշ մասեր, ինչպես տաք ու սառը ջրի, գոլորշու անցքեր, խողովակներ: Հետևապես կոսպերատիվի միջոցներով պետք էր գնել միայն մեքենաներ ու այլ սարքավորումներ, այս բոլորը սարքել, տեղավորել ու գործի գնել լվացքատանը: Գծախառնաբար, Իվանովո-Վոզնեսենսկու լվացքատան գործը խիստ ձգձգվեց: Արտասահմանից պատվերված մեքենաները չեղկար ժամանակ չստացվեցին, մեզ մոտ տրված պատվերները նույնպես ինչվոր ուշացան, բայց այժմ գործն արդեն վերջանալու վրա յե: Սակայն, առանց սպասելու Իվանովո լվացքատան ավարտելուն, առայժմ մի շաբբ կաղձակեցան թյուններ և արդեն ձեռնարկել են նույն գործին: Այսպես կառուցվում են կամ կառուցման նախապատրաստություններն են ինը լվացքատուն՝ կովրովում, Գուս-Սրիստայլում, Տվերլուում, Մոսկվայում, կոստրոմայում, Իժևկում, Սվերլուում և այլ տեղերում:

Ինչպես է աշխատել Իվանովո-Վոզնեսենսկու լվացքատունը Նկատի առնելով գործի նորութունը նկատի առնելով այն մեծ հետաքրքրությունը, վոր ներկայացնում են, ավելորդ չի լինի մանրամասն նկարագրել այստեղ թե մոտավորապես ինչպես է կատարվելու ամբողջ աշխատանքն այդ նոր կառուցվող առաջին կոսպերատիվ լվացքատաներում:

Մանրամասն մշակված նախագծերի համաձայն, գործը պիտի կատարվի մոտավորապես հետևյալ կերպով—Իվանովո-Վոզնեսենսկու լվացքատան ամբողջ շենքը, բոլոր մուտքերն ու լիքերը միանգամայն առանձնացված են բաղնիքից և նրա հետ վնչ մի հարաբերություն չունին:

Լվանքատան կից կա մի առանձին, մեկուսացված մեծ ու լուսավոր սենյակ, հատուկ սարքավորումով, վորտեղ տանտիրուհին կամ բանավորուհին կարող է թողնել իր մանկան այն 2-3 ժամ, յերբ ինքը զբաղված կլինի իր վացքով: Սենյակը հարմարեցված է 15-20 մանկան համար: Լուստողբածնի հետ կապած պայմանագրի համաձայն, այդ իր տեսակի առանձնահատուկ մսուրներին ամրացված կլինեն առանձին մալղիկ, վոր հակեն ու խնամեն մանուկներին:

Բանվորուհին, իր մանկանը թողնելով այդ մսուրում, առանձին մուտքով, վոր կապ չունի վացքատուն հետ, սպիտակեղենը վերցրած, մտնում է վացքատան նախասենյակը: Այդտեղ լաբիրինաի նման, դասավորված են մեծ քանակությամբ համարակալված փոքրիկ պահարաններ: Այդ պահարաններից մեկում բանվորուհին թողնում է վերնազգեստը ու կողպելով, բանալին վերցնում է:

Այդ նախասենյակից բանվորուհին ընկնում է ջոկելու բաժանմունքը, վորտեղ առանձին սեղանի վրա նա ջոկում է իր վացքը՝ գունավոր կտորներ առանձին, փոքրերը՝ առանձին և այլն:

Այնուհետև նա իր ջոկած վացքը ձեռքին անցնում է մի այլ սենյակ, վորտեղ կշռում են վացքը, վերցնում վճարն ու բանվորուհին ստանալով մի համար, մտնում է արդեն վացքի դահլիճը:

Իվանովոյում յերկու այդպիսի դահլիճ կա: Դրանցից յուրաքանչյուրի մեջ պիտի տեղավորվի վեց վացքի մեքենա, վեցական այսպես կոչված մզիչներ (ցենտրոֆուզ) գործիքներ և բացի դրանցից 18-ական վացքի տաշտեր:

Լվածքի ամեն մի մեքենա ունի յերեք ինքնուրույն, սարքից անջատ սեկցիա (բաժանմունքներ): Այսպիսով միաժամանակ կարող են վանալ 36 հոգի բոլորոհան չխանգարելով իրար, ու առանց իրերը խառնելու առաջին դահլիճում տեղավորված վացքի մեքենաների յուրաքանչյուր սեկցիան տանում է մոտավորապես 10 ժամ: Վացք, իսկ յերկրորդում՝ 16 կիրգրամ:

Ամեն մի դահլիճում սպասարկում են յերկուական բանահրկիչներ, վորոնք առաջին՝ գործի չեն դնում յուր մեքենաները և, յերկրորդ, տալիս են բանվորուհիներին բոլոր կարևոր ցուցումները: Այսպիսով, ընկնելով վացքի դահլիճը, բանվորուհին հրահանգչի ցուցմունքով իր վացքը դարձնելով ամապատասխան սեկցիայում, ինքը հեռանում է: Յերեքերեք սեկցիան ել լցրած են լինում, հրահանգիչը գործի յե դնում մեքենան: Սկզբում նրա մեջ թրջվում է վացքը, հետո վացվում, յեռացվում, և վերջապես ուղղվում ու լեղակվում: Այն բոլորը կատարվում է մեքենայի միջոցով, առանց բանվորուհու վորևե մասնակցության: Մեքենայի մեջ ջրին խառնում են վացքի յուղը: Մեքենայի յուղերը, վորոնք առանձին ամանի յուր յուր կարևոր նյութերը, վորոնք առանձին ամանի մեջ պատրաստվում են հենց նույն տեղը: Այդ նույն յուղերն են՝ 1 ֆունտ սապոն $\frac{1}{2}$ ֆունտ սոդա 1 փուլթի յուղ են՝ 1 ֆունտ սապոն $\frac{1}{2}$ ֆունտ սոդա 1 փուլթի յուղ են: Վացքի համար վորևե այլ նյութի խառնուրդ պիտի տակացնելու համար, ինչպես որինակ կլի և այլն, չի թույլատրվում: Հենց այստեղ պիտի և նշել և այն, վոր վացելից թմրուկի մեջ չկա վոչ մի սուր անկուր մաս կամ խոզանակ, վորի շնորհիվ և վացքի շորերը միանգամայն ազատ են փշանալուց: Յեթե մեքենայի մեջ դրվում են գունավոր շորեր, վորոնք կարող են

գուհը տալ այն ժամանակ վացքի նյութերի
ավելացնում են եսենցիա կամ քացախ, վորը պնդ
նում է ներկն ու հենց դրանով էլ պաշտպանում
փչանալուց:

Լվանալու պրոցեսը տևում է 50—60 րոպեի
ժամանակամիջոցում բանվորուհին իրեն տրված
քի տաշտի մեջ, վորի մոտ հարմարեցրած են տաք
սառը ջրի ծորակները, վանում է ձեռքով մանր կտ
ները, գունավոր կամ բարակ շորերը, վորոնք պե
ն են և վացվեն առանձին գոտեղութիւմը ու խնամքով:

Լվանալու պրոցեսը վերջանալուց հետո հրահան
գիչը կանգնեցնում է մեքենան: Բանվորուհին հան
է վացքն իր սեկյիլայից, աանում մզիչ մեքենայի մո
վորի մեջ, շնորհիվ արագ պտույտ գալու, վացքը 12
15 րոպեյում մզվում՝ քամվում է, գրեթե կիսաշ
դրության հասնում: Վորովհետև մզիչ մեքենան այն
պես է հարմարեցրած, վոր շուրջ շարունակ ծորում
դուրս, ուստի այդ հանդամանքը հնարավորութուն
տալիս միաժամանակ մզել թե գունավոր շորերը,
սպիտակեղենը: Գունավոր շորերը դարավում են պ
տերի մոտ, իսկ սպիտակեղենը՝ մեջ տեղը, վորի շնոր
հիվ գուհը ավող գունավոր շորերից ջուրը բոլորով
չի կպչում սպիտակեղենին: Հետևապես մեքենայի
վացքը դուրս է դալիս արգեն միանգամայն մաքուր
ու կիսաչոր: Իսկ, վորպեսզի բանվորուհին կեղտո
ձեռքերով ու մարմնով չմտանա մաքուր շորերին,
գահիճին կից մի սննյակում կան ցնցուղներ: Մինչ
դեռ վացքը մզվում է մեքենայում, բանվորուհին
հնարավորութուն ունի դուրս գնալու:

Այնուհետև վացքի մաքուր շորերը բանվորուհին

առջի սայլակով քամիչ մեքենայից փոխադրում է չո
ցնող պահարանների մոտ, վորոնք իրենց հերթին,
վաշտակու բաժանված են միմյանցից անջատ կամեր
ների, վացող բաժանմունքների թվի հեմեմատ: Հրա
նդիչը ցույց է տալիս կամերները, և բանվորուհին
տում է այդտեղ իր վացքը: Ճաս րապե տեղ տարու
յան բարձր և ողի խիստ ուժեղ հոտանքի մեջ շորերը
պահարանում բոլորովին չորանում են:

Այստեղ էլ բանվորուհին կարող է վերջացած
կամարել իր աշխատանքն ու չորացած, բաց չհար
թուկած շորերը տանել տուն: Իսկ չեթե ժամանակը
վերում է, նա շորերը չորացնող պահարանից փոխա
վերում է մի ուրիշ բաժանմուք, վորտեղ վացքի այն
ասը, վոր տաք հարթուկման կարևը չունի, հարթու
ում են ելեքտրական դրանակի միջոցով, իսկ փնացած
ասը հարթուկում ձեռքով՝ հատուկ տախտակների
վրա, վորոնցից կան նույպես 36 հատ: Հարթուկումը
ժամանակավորապես դեռ պիտի կատարվի սովորական
հարթուկումով: Նախատեսվում է վորոշ ժամանակից
հետո սարքել էլեքտրական հարթուկներ:

Այսպիսով, ամբողջ վացքի այսինքն՝ վանալու,
չորացնելու և հարթուկելու վրա գործողվում է բն
դամինը 3 ժամ: Մի սրում, յերկու հերթով վացքա
տունը կարող է բավարարել 200-ից արելի մարդկանց:

Մաքուր վացքը ձեռքին բանվորուհին նորից
մտնում է պահարաններով նախամումակը, բաց ար
դեն մյուս կողմից: ուստի և բնավ չի հանդիպում
կեղտոտ շորերով դեռ նոր չեկողներին: Ստանալով իր
վերնագգեստը, նա մյուս գոնից դուրս է գալիս փո
ղոց (վոչ այն գոնից, վորտեղից ներս է մտել), վեր
ցնում յերեսային ու տուն գնում

Այսպէս, առանց տուն—դու կեդոտակու, առանց
լերեխալին անխնամ, անտեր թողնելու և առանց
առանձին ծանր աշխատանք կրելու՝ թեթե վճարով (մ.
75 կ. փութը) բանվորունին լերեք ժամվա ընթացքը
ազատվում ե աչգ շախազանց անախորժ աշխատանքից:

Այս նկարագրութեանը մնում ե ավելացնել այն
վոր վացքատանը գրվելու լին չորս հատ ել մեծ տա
տեր, խոշոր շորերը լվանալու համար, ինչպես՝ վեր
մախներ, վերնաշորեր և այլն և բացի դրանից նախ
տեսվում ե սարքավորել հատուկ մեքենա առանձնա
պես կեդոտու իրերը, ինչպես՝ արահագուստն ու հ
տուկ հագուստը և այլն վանալու համար:

Լվացքարանի ամբողջ շենքը հրաշալի կերպով
պիտի ողակութիւլի. այնպէս, վոր թե գոլորշին ու հոտ
դուրս քաշի, թե իջնցնի վացքատան տաքութեանը
աստիճանը: Հետեապես այն մի քանի ժամը, վոր հար
կադրված են անցկացնել վացքատանը, կանցնի գրե
թե նորմալ պայմաններում, առանց բացասական ազ
դեցութիւնն ունենալու հաճախորդների առողջութեան
վրայ:

Այսպէս և արդեն ավարտվող Իվանով-Վոյնի
տեխնիկա առաջին կոոպերատիվ վացքատունը, այդպէս
կլինեն մոտավորապես և կառուցվող մյուս վացքատ
աները:

Հատկապես հենց այս տիպն ել պետք և համար
րել ամենից հարմարավորը մեր պայմաններում և մեզ
համար ամենամատչելին իր արժեքով:

Կազմակերպելով այդպիսի վացքատուն, չպետք
և վախենալ, թե նա կմնա առանց բնոն սփորման:

նց միայն կոոպերատիվի ճաշարանների աշխատա
որների ու խանութներում վաճառողների հատուկ
գուստը և ճաշարանների ու խոհանոցի սպիտակի
ներ և այլ շորերը կարող են արդեն մասա՛ր բեռնա
որի վացքատունը:

Այս լուրջ գործին պիտի կպչեն շատ ու շատ
անվորական կոոպերատիվներ:

Բավարար միջոցների բացակայութեան դեպքում
հարկել յե միանալ բնակարա
նայ կապտակի համար կարելի հետ, տեղական կաճուճալ տըն
այն կոոպերացիայի հետ և այլն: Բաց և այնպէս, ինչպէս
տեսութիւնների հետ և այլն: Բաց և այնպէս, ինչպէս
լ լինի, բանվորական ընտանիքի համար այս չափա
նաց կարևոր գործը պետք ե առաջ տանել:

Վերագաճախով դարձյալ արհես
տանոցների հարցին, անհրաժեշտ ե

Արհեստանոցներ տանոցների հարցին, անհրաժեշտ ե
նշել, վոր յիթե նոր շորեր կարելու ու ձևափոխելու
արհեստանոցներ արդեն տեղ-տեղ կան, ապա կարկա
տելու ու վերանորոգելու արհեստանոցները դեռ շատ

թիչ են. իսկ շորերի ու վտանամանների կարկատելն
անհազին նշանակութիւնն ունի վոր միայն կենցաղի տե
սակետից, այլ և բանվորի գրպանի տեսակետից: Մենք

հաճախ ենք նետում այնպիսի իրեր, առանձնապես
վտանամաններ, վոր համապատասխան պայմաններում
կարելի լի կարկատել և հագնել դեռ յերկար ժամա
նակ:

Պետք ե ասել, վոր արտասահմանում իրերի հետ
այնպէս անփութ չեն վարվում, ինչպէս մեզանում, և
կարկատելն այնտեղ ավելի լի, քան մեզ մոտ:

Մոտ ժամանակներս միայն Մոսկվայում ու մի
չարք ուրիշ քաղաքներում արհկոպերացիայի հետ մի-

տսին սկսեցին բանալ վոտնամաններ կարկատելու ար-
հեստանոցներ: Ամեն մի փայտեր կարող ե իր կո-
շիկները բերել իրեն մոտիկ կոոպերատիվի կոշիկ-
խանութը, հանձնել և ցույց տալ կարկատելու տեղն
ու բնույթը: Խանութն այդ կոշիկները կուղարկի ար-
հեստանոց, վորտեղից վորոշյալ ժամկետին արդեն
կարկատված կվերադարձվեն նորից խանութը:

Այն տեղերում, վորտեղ կան այդպիսի արհես-
տանոցներ, պետք ե ասել, վոր կարկատում են վոշ-
այնքան վատ և եժան: Սակայն կոշիկները տիրոջը
հասցնելը դեռևս չի կանոնավորված ու 1—2 որվա
փոխարեն պահում են մի շաբաթ, յերբեմն ել ավելի,
վոր արդեն թուլատրելի չե:

Պետք ե հուսալ վոր այդ թերությունը կվերաց-
վի, ու այդ լավ ձեռնարկությունը կարդարացնի իր
վրա դրված հույսերը:

Սակայն, չեթե այդպիսի բան կարելի յե անել
վոտնամանների վերաբերմամբ, ինչո՞ւ նույնը չի կա-
րելի անել և գուլպաները լցնելու, շապիկներ ու վեր-
նազգեստները կարկատելու վերաբերմամբ: Չե վոր
այդ դեպքում անպին աշխատանք ու ժամանակ խնա-
յած կլինենք:

Այս նպատակի համար կոոպերատիվները կարող
եյին ոգտագործել գործազուրկների կուլեկտիվներին:

